[illegible]

[illegible]

[illegible] N



[illegible]

[illegible]

32

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] =
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] :
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] :
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]:

[illegible]:

[illegible]

[illegible] =

[illegible]:

[illegible] -
[illegible]
[illegible].
[illegible]:

~~[illegible]~~

---

[illegible]

[illegible]

# ՆՈՒԱԳԱՐԱՆ ԶԲՕՍԱՆԱՑ

ԱՌ

'Ի ՊԷՏՍ

## ԱԶԳԱՑԻՆ ԽՐԱԽՃԱՆՈՒԹԵԱՆ

'Ի ԿԱԼԿԱԹԱ

ՑԱՐԱՐԱՏԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

1846

153
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՆԱԽԱԲԱՆ

՚Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ կենցաղավարութեան՝ արդարև ո՛չ սակաւ քաղցրանայ խրախճանական հանդէսն զարդարեալ Սիրով. որով մարդիկ՝ ո՛չ միայն մատայեալ զաշխարհային բազմադիմի վիշտս՝ զմոռացեալ բերկրին, և խնդութեան հոգւով վայելեն դոյզն ինչ զբօսանս երջանկութեան, այլ և՝ շահին զբարեկամս, զհրեշտակս և զսիրելիս, որք համարին հոգաբարձուք և կարեկիցք միմեանց, ըստ որում բնութենակիցք. զի անկապար է սէր առանց ընկերակցի, և համր է լեզու բարոյ խօսակցի. և որպէս այս կարևոր և օգտակար է մարդոյ՝ սոյնգունակ հարկաւոր է առարկայ իմն զուարճալի և անմեղ Զբօսարանաց՝ առ ՚ի կատարեալ լինելոյ նորին։ Ամօք յառաջ հաստատեալ փոխադրեցաւ այս Տա-

ղարան մի ՍԻՐԱԿԱՐԿԱՂ անուն , զոր ամենեքեան քաջ ճանաչեն . սակայն վասն սակաւութեան նորին՝ ընդ հնութեան ժամանակին և սուր ժանեաց՝ աղարտեալ էին գրեթէ բոլորն . և ուր ուրեք դէպ լինէր խորախճան Պատուելի Հասարակութեան Մեծազանց՝ զգալի լինէր պակասութիւն օրինաւոր Տաղարանի ։ Ամին իբր հաւաքեալ ասփուսփ և անփուսփ քանի մի ախորժելի երգս՝ խառն ընդ զուարճաբանական խաղալիք Աշղից , նպաստաւորութեամբ փղե-ցաւ յառաջինսայս ՚ի դէպս ցանեացողաց . յուսալով ո՛չ այլ ինչ՝ եթէ ո՛չ խաղաղ , քաղցր և սիրով գործածութիւն , որ լիցի ծնող Սիրոյ և անու-շիկ ընկերակցութեան ։

# ՆՈՒԱԳԱՐԱՆ

## ԶԲՕՍԱՆԱՑ

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ։

Օրհնեա՛ Տէր զայս ամուսնութիւն
(Անուն հարսին և փեսային)
Եւ պարգեւեա՛ վայելչութիւն,
Ընտանեաց նոցա՝ ընդ նոսին։

Յարատեւեա՛ երջանկութիւն,
Մինչ ՚ի վախճան կենաց սոցին.
Եւ տուր սոցա Որդէծնութիւն,
՚Ի յիշատակ նախնեաց սոցին։

Եւ այսպիսի ուրախութիւն,
Արժան արա նաեւ նմանեաց.
Որք ունին յոյժ կարօտութիւն,
Առնուլ ճաշակ սուրբ հարսանեաց։

## ՈՒՐԱԽ ԼԵՐՈՒՔ ։

Ուրախ լերուք հարսն և փեսայ ,
Որք ընկալայք շնորհ գերակայ ·
Զի օրհնութիւն անանցական ,
Պահելոց է ձեզ անսասան ։

Վասն այս ձրի մեք յոյժ ցնծամք ,
Որ եմք մեք ձեր սերտ բարեկամք ·
Սակս այսորիկ ըմպեմք զբաժակ ,
Ուրախանամք մեք անկատակ ։

Խնդրեմք ՚ի Տեառնէ ձեզ պճնեսցէ ,
Պտղօք բարեօք զարդարեսցէ ·
Մինչ ՚ի խորին ձեր ծերութիւն ,
Պարգևեսցէ բարօրութիւն ։

## ԵՍ ՁԵԶ ՑԱՆԿԱՄ ։

Գոչ եմ զձէնջ ընդհանրական ,
Ցնծել զայս օր ուրախական ·
Որով գտի մխիթարութիւն ,
Ստանալոյ ձեր հաճութիւն ։

Պարտական եմ ձեզ մշտապէս ,
Պահել սրտիս հաստատապէս .
Ձերոց քաղցրին ընկերութիւն ,
Որ պատճառեաց մեզ ցնծութիւն :

Յիշէք զայս օր ազնիւ Տիկնայք ,
Յիշէք և դուք միշտ՝ Օրիորդք .
Եւ դուք յիշէք Երիտասարդք ,
Որք եղայք ինձ բանիս յորդորք :

Տացէ ինձ Տէր յաջողութիւն ,
Եւ ձեզ ցանկամ զայս հաւասար .
Միշտ ընկալնուլ ձեզ գոլութիւն ,
Մնամ ես ձեր ծառայ———

## ՅՆԾՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ:

ՅՆԾՈՒԹԻՒՆ սրտի այս խմբի մերոյ ,
՚Ի գործ և ՚ի դէմս է տեսանելի .
Թէ որքան խնդամք բերկրութեան ձերոյ ,
Համարեալ զայն մեզ անորոշելի :

Վասն որոյ սիրտ մեր լի ուրախութեամբ ,
Անհամբեր առնէ մեզ զայս երգ առնել.

-Քանզի չէ օրէն բազմիլ լռութեամբ ,
Թարց խնդակցութիւն մեր խոստովանել ։

Նա և զայս պաշտօն բարեկամական ,
Հարկաւոր է մեզ այսու ցուցանել ․
Զի վասն մանկան ձեր եմք պարտական ,
Խնդրել 'ի Տեառնէ զարգացուցանել ։

Ընդ ծընողաց իւր երկար կեանք յուսամք ,
Պատեալ մշտապէս այսու խնդութեամբ ․
Եւ մեք՝ որ եմք ձեր հաստատ բարեկամք ,
Տեսանել զայն միշտ յոյժ ուրախութեամբ ։

ՄԱՔՈՒՐ ԳԻՆԻ ։

ԵԿԱ՛ՅՔ եղբա՛րք առնումք ճաշակ
Սիրոյ մերոյ վայելչութեամբ ․
Առէք զգինին, լցէք զբաժակ ,
Եւ ըմպեցէք ախորժութեամբ ։

Զի ոչ գիտեմք վաղուեան աւուր
Զինչ ցաւ ունէ մեզ բերելոյ ․
Վասն որոյ մինչ հաւաքեալ կամք ,
Ջանամք յաւէտ մեզ բերկրելոյ ։

Ժամանակաց է մեր բնութեան ,
Որոց չունիմք առնել հրաման ․
Զի չեն կամաց մերոց տուեալ,
Կամիլ, բերել, տալ առ ժամայն ։

Զգաստ կացէ՛ք մի՛նչ խոստանան ,
Ձեզ այս աւուրքս ուրախական ,
Վայելելոյ ՚ի միասին ․
Զի մի՛ տրտմի՛ք սակս այս մասին ։

Բարձէ՛ք ՚ի ձէնջ զխռովութիւն ,
Եւ կամ ելէ՛ք ՚ի խմբից մեր ․
Զի սիրտ լցեալ աղտեղութեամբ ,
Խօսելոց է միշտ վայր ՚ի վեր ։

Մաքուր զինին վարելոց է ,
Զախտ ներանայնոց՝ որ կիզեալ կայ ․
Զի սիրտ սուրբ ըստ նախկին բնութեան ,
Սրբեալ մնայ միշտ յարակայ ։

Բարձրացուցէ՛ք բաժակ լցեալ ,
Եւ սերտ սրտիւ երկրորդեցէ՛ք ․
Բանս իմ, զորմէ երթամ յիշել ,
Ապա սիրով ճաշակեցէ՛ք ։

Նորոգութիւն Տանն ՀԱՅՈՑ ,
Աններկայ մեր Բարեկամաց .
Պարծանք Ազգիս Ներկայ Տիկնաց ,
Եւ այս խմբեալ միակամաց :

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ :

Ըմպեմք զբաժակս մեք յոյժ սիրով ,
Առ Տէր մաղթեմք զայս խնդրելով .
Քեզ զերկար կեանս պարգեւելով ,
Միշտ քեզ լիցի Տէր ապահով :

Նաւ տացէ քեզ ողջութիւն ,
Եւ գործոց քոց յաջողութիւն .
Ընտանեաց քոց ուրախութիւն ,
Եւ մանկանց քոց զարգացութիւն :

Մի՛ երկմտիր 'ի քում սրտի ,
Թէ զիս առնեմ քեզ հաճելի .
Այլ յիշեա՛ լե՛ր դու հաւատաս ,
Ցանկամ ժամու յամենայնի :

## ԱՌ Ո՞ՒՄ ԴԻՄԵՄ ։

Զարդ. կենաց իմ, պարծանք և փառք,
Դու ես միայն, և ո՛չ այլ ոք ·
Թարց քո անձն իմ է յոյժ անարգ,
Ոչ ոք ունիմ, զի տայ ինձ հոգ ։

Ճըրագ ես դու անձին իմոյ,
Լինիմ խաւար, թէ հեռանայցես ·
Սիւն, յոյս, և սէր սրտի իմոյ,
Առ ո՞ւմ դիմեմ թէ նեղանայցես ։

Կամ հա՛տ կենաց իմ, կամ ապրեցո՛,
Եւ կամ ցո՛յց ինձ այլ ճանապարհ ·
Որով անձն իմ յոյժ զովացո՛,
Զի մընացից անդորրաբար ։

Յիշատակ է այս քո սիրոյ,
'Ի ...... ( Որոյ անուն լինի, )
Սէր քո քաղցրիկ ինձ արբեցո՛,
Որքան կեանք իմ յաշխարհիս է ։

## ԱՍԷ ԲՆՈՒԹԻՒՆ ։

'Ի ԾԱՂԿԱՆՑ ասէ բնութիւն,
Ունիմք գիտել զբեր ծառոյն.
Է՞ր ոչ կրեց ազդեցութիւն,
Գիտել պարտիմք սրոյ հանգոյն ։

Տես զխօսնակ ակունք արթուն,
Որք լռութեամբ յայտնի առնեն.
Բանք ներքնայնոց թէ և ծածկեալ,
'Ի ներս սրտի՝ որ անցանեն ։

Ոչ ինչ ունիմ պահանջելոյ,
Յաւել քան զայն՝ զոր տեսանեմ.
Արփին զիմացդ, որ սէր հոսէ
Մաքուր մտօք՝ քանզի գիտեմ ։

Բայց լեր հաստատ զաւեալն 'ի քէն,
Պահելոյ եմ միշտ մաքրութեամբ.
Ջանալով զի արժանայցեմ,
Ապրել յաւէտ քոյդ հաճութեամբ ։

## ՄԻ՛ ՄՈՌԱՆԱՐ ։

ՍԻՐԱՀԱՐԵԱԼ եմ քոյ սիրով,
Սիրտս կիզեալ ուժգին բոցով.

'Ի սիրոյ քոյ մնամ լալով ,
Մ՚ի մոռանա՛ր իմ Սիրելի ։

Զարթնում 'ի քնոյ առ քեզ կարդամ ,
Համայն սրտիւ կեալըդ ցանկամ .
Զի տեսից քեզ յամենայն ժամ ,
Մ՚ի մոռանա՛ր , իմ Սիրելի ։

'Ի խաւարել արեգական ,
Ոչ դադարէ սէրն իմ այնքան .
Զի ննջեցից անդորրութեամբ ,
Մ՚ի մոռանար , իմ Սիրելի ։

Իր՞ ես այդքան խստասիրտ լեալ ,
Երբէք չկամիս ինձ ողորմալ .
Սէր իմ , սէր իմ , կեանքս է աւա՜ղ ,
Մ՚ի մոռանա՛ր , իմ Սիրելի ։

ԿԵԱՆՔ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ։

ԿԵԱՆՔ ուրախութեան եկա՛յք վայելեմք ,
Մինչ իղձ բնութեան առ մեզ տեսանեմք .

Որ տարաժամ , որ միգացեալ ,
Որ համայնից տուող վախճան ,

Առ դրունս ունիմք յառաջ եղեալ,
Փութա՛ գործել ընդ մեզ դարան ։

Կեանք ուրախութեան, և այլն ։
Առ ինչ օգուտ յաւել աշխատ,
Մինչ պէտք կենաց 'ի չար ածի ․
Որոց ստացումն՝ թէ չիմք պարապ՝
Առ ձեռն ունիմք միշտ պատրաստի ։

Կեանք ուրախութեան, և այլն ։
Դի՛ք ցանկութեան չափ և կանոն,
Երջանկութեան հետևելով ․
Զի ագահից տախանաց իղձ
Ինքեամբ թաղի մեռանելով ։

Կեանք ուրախութեան, և այլն ։
Քանզի կարծիք ունել անչափ,
Է լոկ ընթացք առ բերկրութիւն ․
Բայց ոչ գիտեն, զի այդ սոսկ միտք,
Բերելոց է թշուառութիւն ։

## ԹՈ՛Ղ. ԶԻ ՄՆԱՑԻ ։

Ընդէ՞ր պարտիմ տգիտաբար ,
Յայտնել սէրն այն , որ զիս վառէ ·
Եւ կամ զանուն՝ որ 'ի Թագուստ ,
Սիրտ իմ ցայս վայր պահեալ ունէ ։

Քանզի փոքունք են ըղձալոյ ,
Զայն զոր կրեմ սիրելութեամբ ·
Եւ թէ տայից ծանօթութիւն ,
Խօսելոյ են կատակութեամբ ։

Ցորժամ զնա յիշումն ածեմ ,
Ըղձայարանքս կենդանանան ·
Եւ 'ի տեսլս մտաց իմոց ,
Համայն բարիք հանդիսանան ։

Մինչ անկեալ կամ 'ի տրտմութիւն ,
Արտասուք իմ յարգելս պահէ ·
Եւ մինչ մատնեալ 'ի նեղութիւն ,
Ցաւք իմ դիւրաւ դիւր անցանէ ։

Մի՛ թէ պարտիմ տալ տխմարաց ,
Տեղի խօսից վասն այս անուան ·

Որ 'ի բոլոր ժամըս կենաց ,
Ինձ կազդուրէ և տայ զարման ։

Թող զի մնասցէ միշտ սրբութեամբ ,
Փակեալ 'ի սիրտ իմ տրտմութեամբ ․
Եւ ոչ յիշի անօգտաբար ,
Բայց միայն յաղօթս և 'ի մաղթանս ։

## ԶԱՅՆ ԶՕՐ ՈՒՆԻՄ ։

ՄԻՆՉ պարապիմ սակս սիրելւոյս ,
Ջանք և աշխատ միշտ քաղցրանան ,
Թէ և իմ բախտ չաջողեսցէ ,
Սիրտ իմ և միտք ոչ զըլանան ։

Ընդէ՞ր տարփամ անչափ շահուց ,
Եւ կամ անսամ ձայնի փառաց ․
Մինչ ոչ հերքէ զայն՝ զօր ունիմ ,
Նա՛ որ սիրտ զիմ ունի վառած ։

Ժամանակըն անցանելով ,
Թողու զհետ լոկ յիշատակ ․
Անցեալ կենաց և յանցանաց ,
Յիշողութեան մեր նպատակ ։

Ցաւէտ հաճիմ յաղքատութիւն ,
Պատեալ սիրով և մաքրութեամբ ·
Քան զանհամար հարստութիւն ,
Լցեալ անոտի փարթամութեամբ ։

ԵՐԶԱՆԻԿ ՎԱՐԴ ։

ԵՐԶԱՆԻԿ վարդ , մինչ բնութիւն ,
Քեզ պահպանէ զինաւորեալ ·
Ընդդէմ Նոցա որ անպատրաստ ,
Դիմեն առ քեզ ըղձիւ վառեալ ։

Գոյն քոյ ախորժ , հոտ քո զմայլիչ ,
Տես քոյ յաւէտ բերկրեցուցիչ ·
Ոչ խնայէ սակս վայելման ,
Որք յարգութեամբ քեզ մերձենան ։

Տես զսոխակ՝ որ անդադար ,
Առ քեզ ձայնէ սիրով վառեալ ·
Անկեղծ սրտիւ՝ մաքուր մտօք ,
Կեանս իւր ունի քեզ նուիրեալ ։

Ո՜հ թէ ո՛ր քան պարտիմ ջանալ ,
Օրինակաւ քով ընթանալ ·

Զի սէր սուտակ, և սիրտ նմխեալ,
Ցրնէն ՚ի բաց ձեան հերքեալ ։

## ԵԿԱՅՔ ԱՌ ՈՐՍ ԵՐԹԱՄՔ ։

ՄՈՒԹՔ գիշերոյ խոնարհեալ՝ տան
Ծագել լուսոյ առաւօտու ․
Շունք որսորդաց ազդեալ խնդան,(Կրկնեա՛)
Մինչ տեարք զփողն հնչեն ազդու ։
Եկա՛յք առ որս երթամք ․ ( Զորխօ )

Կանայք՝ զարանց պարանոցաւ
Անկեալ, ջանան արգելելոյ ․
Անձրև՝ կարկուտ և հողմ սկսաւ, (Կրկնեա՛)
Չէ՛ հնար՝ ասեն՝ ձեզ որսալոյ ։
Թո՛ղ մեզ առ որս երթամք ․ ( Զորխօ )

Անընակ աղուէսն կայծակնանման,
Փախչէ փրկել համայն հնարիւք
Զկեանս, որոյ զհետ երթան, ( Կրկնեա՛ )
Հետապօտքըն բազում ջանիւք ։
Եկա՛յք առ որս երթամք ․ ( Զորխօ )

Տե՛ս թալկացեալ չկարէ փախչել,
Թէ և ըղձիւ յառաջանայ ·
Հասին որսորդք ետուն արգել, (Կրկնէ՛)
Նաև կենացն վախճան և կայ ։
Եկա՛յք առ տունս երթամք · ( Զուրէ )

Այն՛ բազմեմք սեղան սիրոյ ,
Եւ վայելեմք խրախճանութեամբ ·
Պարգև կենաց բնութեան բերոյ , (Կրկնէ՛)
Եւ հանգստեմք խաղաղութեամբ ։
Եկա՛յք գինով խնդամք · ( Զուրէ )

ՎԱՐՔ ՀԱՄԵՍՏԱԲԱՐՈՅ ։

ԹԱԳՈՒՀԻԴ ազանց սեռին էգական ,
Ունելով յանձին զարդ իմաստական ·
Եղեր օրինակ դու ՚ի մէջ մարդկան ,
Ո՞վ քեզ նմանի վարուք գովական ։

Կայտառ դու շարժմամբ և պատրաստական,
Արիդ ինքնազէն՝ որպէս զօրական ·
Ղուք դու ընկերացդ և հաճոյական ,
Սէր , քեզ հետևողն չէ մերժական ։

Յոկուհնէ համեստ և արխական ,
Լըցեալ հանճարով և խոհեմական .
Ընկա՛լ դու յինէն զայս զով ըղձական ,
Բերկրեցեալ սրտիւ և յօժարական ։

---

## ԼՈ՛ՒՐ ԻՆՁ ԱՂՋԻԿ ։

ՀԱ՛ՅԵԱՑ սիրով , հայեա՛ց սէր իմ ,
Եւ քաղցրութեամբ լո՛ւր ինձ Ա՛ղջիկ .
Զի ՚ի սիրոյդ վիրեալ կոծիմ ,
Վասն այն սիրտ քո տո՛ւր ինձ , Ա՛ղջիկ ։

Սոխակն ՚ի հոտ բացեալ վարդոյն ,
Զմայլեալ իսպառ մընայ յամպոյն .
Եւ դու կեա՛նք իմ , որոյ հանդոյն ,
Հոտս անուշից բո՛ւր ինձ , Ա՛ղջիկ ։

Տես ղթրթրիկն սիրով վառեալ,
Ըղլապտերաւ լինի կիզեալ .
Սոյնպէս և դու յիս գթացեալ,
Սիրոյդ արա՛ կուր զիս , Ա՛ղջիկ ։

Խօսնակն սիրով լըցեալ ձայնէ,
Եւ գծագումն լուսոյն աղբէ.
Ցայգ և ցերեկ սոյնպէս վառէ
Սէր քո երբև հուր զիս, Ա՛ղջիկ։

Սաստիկ ցաւօք տքնիմ անճար,
Նայեա՛ց առ իս գթածաբար.
Զի խոցեալ է անխնայաբար
Սէր քո, որպէս սուր զիս, Ա՛ղջիկ։

Կարօտ սիրոյդ ուժգին պասքեալ,
'ի ձեռս մահու կա՛մ գեգերեալ.
Դու որպէս ամպ յերկնից իջեալ,
Տո՛ւր փրկութեան ջուր ինձ, Ա՛ղջիկ։

ԿԵՆԱՑ ԻՄ ՅՈՅՍ։

ԴՈՒ՝ որ ծագմամբն արեգական,
Վանես զմութ գիշերական.
Խնայեա՛ ուրեմն առ իս գթալ,
Եւ գըթութեամբ յիս ողորմալ.
Թո՛րց քո չէ հնար յինէն բառնալ
Այն մէգ որ զիս ունի պատեալ։

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

'Դու՝ որ շնորհնս զվառեկաց ,
Անել տեղէ՝ ածել 'ի բաց ·
Գթա՛ ուրեմն խաւարելոյս ,
Օժանդակեա՛ և ա՛ծ 'ի լոյս ·
'Ի քէն կախի բոյժ իմ ցաւոյս ,
Քանզի չունիմ ուստեք յոյս :

Վասն այն նեղեալ առ քեզ դիմեմ ,
Եւ ցաւ սրտիս քեզ բողոքեմ ·
Հայեա՛ց ուրեմն թշուառելոյս ,
Եւ հաճեա՛ց դու տալ ինձ խրախոյս ·
Զի 'ի քէն է կենաց իմ յոյս ,
Եւ քև յուսամ առնել խնջոյս :

## ԼՈՅՍ ԱՉԱՑ ԿԱՐՕՏԻՄ :

'Ի ՍԻՐՈՅԴ բորբոքիմ ,
Դեգերեալ մորմոքիմ ·
Ո՞ւր ես դու խօսնակ իմ ,
Եկ կեցո՛ զանձըն իմ : ( Կրկնեա՛ )

Լոյս աչացս կարօտին ,
Տեսանել վերստին ·
Պատկերըդ երկնային ,
Սիրալիրդ երկրային : ( Կրկնեա՛ )

Յուսահատ շուարիմ,
Անձնահատ նուաղիմ.
Թէ և մահ ընդունիմ,
'Ի սիրոյդ ոչ խորշիմ: (Կրէնուէ՛)

ՄԻԱՅՆԱԿ ՀՐՁԻՄ :

ՄԻՆՉ յերբ համբերեմ բախտիս խստութեան,
Մինչ յերբ արտասուօք և տրտում շրջիմ.
Եւ մինչ յերբ յանյոյս մտածողութեան,
Կեանք իմ, վասն քոյ ողբալով ննջիմ:

Ա՛նհանգիստ մտօք ցաւիմ յարաժամ,
Եւ լուռ հայեցմամբ պապանձի լեզուս.
Ո՞հ. զի՞նչ արարից.՞զի միւսանգամ
Արժանի եղէց զրկել սիրելւոյս.

Կամաւ ուխտեցից կեանք իմ նուիրել,
Թէ յաջողէ ինձ այս լոկ ցանկութիւն.
Յայնժամ մահընէ՞իմ սիրովն ընդունել,
Քանզի լրանայ այս կարօտութիւն:

Խղճմ ուրեմն՞պալար հասակիս,
Պատճառաւ սիրոյդ վհատեալ է յոյժ.

Միայնակ շրջիմ նման տատրակի ,
Միայնակ ցութեանս դու լինիցիս բոյժ ։

Կեանք իմ անցանէ , սաստիկ տխրութեան ,
Կարօտիւ մնամ քաղցրութեան սիրոյդ ·
Մինչ յորբ կրեմ զցաւ 'ի պանդխտութեան ,
Շրջիմ խելագար , գտեմ նման քոյդ ։

ԿԵԱՆՔ ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ։

ՄԻԱՅՆԱԿ նստեալ մինչ բազում ունիմ ,
Կեանք պանդխտութեան սիրով ընդունիմ ·
Այլ զի՞նչ արարից · քանզի ոչ գոյ ճար ։

Ըստ որում բախտի անգութ խստութեան ,
Ոչինչ կարէ տալ առիթ մեղմութեան ·
Ուրեմն համբերել խրատէ մեզ հանճար ։

Եւ համբերութիւն թէ երկայն տեւէ ,
Երկայնմտութիւն իսկոյն հետեւէ ·
Որոց քաղցրութեան արդ զփորձ ունիմ ։

Զի խոկմամբ թէ կամ 'ի մըտի նոցին ,
Ոչ յաւել թուիմ լինել առանձին ·
Որով զայս կեանս իմ սիրով ընդունիմ ։

ԳԻ՛Թ ՑԵՐԱԶԻ ։

Մինչ տիւն 'ի մէնջ 'ի բաց գընայ ,
Գիշերն տիրէ մեզ մըթութեամբ .
Եւ մինչ լռութիւնըն պահանջէ ,
Նորոգութիւն հանգստութեամբ .
Շրջիմ անդուլ խելագարեալ ։ ( Կրկնե՛լ )

Մինչ թալկացեալ նիրհել ջանամ ,
Հոգւոյս աչաց ձեւակերպի .
Պատկեր նորա՝ յորոյ սիրոյն ,
Սիրտ իմ գերեալ յար տագնապի
Ուժգին սիրով վիրաւորեալ ։ ( Կրկնե՛լ )

Տեսանեմ զնի փայլակն ականց ,
Մածեալ սիրով առ իս շանթէ .
Եւ ձայն նորին գերբընական ,
Ինձ զարմանէ յաւել քան թէ
Բուժ բժշկաց գեր կատարեալ ։ ( Կրկնե՛լ )

Մինչ աչք իմ ընդ ականց նորին ,
Յառեալ ապշեն տատամսեցեալ .
Սիրտ իմ կրէ զայն զգայութն ,
Որ սիրելեաց է հանդերձեալ .
'Ի լռութենէ պարգեւեցեալ ։ ( Կրկնե՛լ )

Որովհետեւ այս է բախտ իմ,
Թո՛ղ մութք եղեն ինձ վիճակեալ.
Գէթ յերազի ճաշակեցեմ
Զայն ցնծութիւն, յորմէ զրկեալ
'ի տուընջեան՝ մնամ պասքեալ։ (Կըչնեա՛)

## ՍԻՐԵԼԻ ԲԱԶՄԱՑ։

Զա՛րդ ընկերաց քոց համեստաբարոյ,
Առաքինազարդ դուստրդ հանճարոյ.
Քաղցրաբար վարուք սիրելի բազմաց,
Հասակաւ մանուկ կատարեալ կամաց։

Տիրուհեդ խելաց յաւէտ քան զմարդ,
Քաղցրութիւն սեռիդ ունելով քեզ զարդ.
Գթութիւն սրտիդ կատարելութեամբ,
Ողջամք յարաժամ կարէ դառնութեամբ։

Ե՛րթ դու Աննայէ փոխան դառնութեան,
Ընկա՛լ 'ի վերուստ զթագ կուսութեան.
Ո՛չ է քեզ օտար ազգոյս հեղինակ,
Այն զոր սիրէիր եղբօր փոխանակ։

Կեալըն քո ցանկայր բազում եռանդեօք,
Լուաց վախճանիդ զերեսդ արտասուօք.

## ՀՈԳԻՈՅՍ ՏԻԿԻՆ ։

Մի՛ նայիր առիս, քա՛ղցրիկ Տիկին իմ,
Ակունքըդ սիրուն գերեցին սիրտ իմ·
՚Ի զո՛ւր փախազիմ, ՚ի զուր տաղնապիմ,
Խոցեալ ՚ի սիրոյդ՝ ՚ի զո՛ւր մեռանիմ ։

Մինչ ո՛չ արժան եմ, ո՛չ զբաղդ ունիմ,
Ո՛չ խղճալ կամիս ՚ի փրկել զանձն իմ,
Զի մի՛ ընդունայն ՚ի ցաւոյդ մաշիմ,
Յոգւոց հանելով տամ ա՛րդ զոգի իմ ։

Եթէ աղաչանս, և թէ արտասուս,
Կամ թէ պատարագ՝ քեզ մատուցանեմ,
Բաւ են լինելոց զսիրտ քո ընդել,
Զի զութ շարժիցես ՚ի փրկել զանձն իմ ։

՚Ի ծունըր կրկնեալ առ քեզ պաղատիմ,
Արտասուօք լցեալ հոգւո՛յս Տիկին իմ,
Խնամեա՛, խղճա՛, գթա՛ և փրկեա՛,
Դի՛ր զիս ՚ի սրտիդ, և կեցո՛ զանձն իմ ։

Եթէ զայս համայն ընդ վայր համարիս,
Սիրտ քո քարացեալ միշտ մնայ վան իմ,
Ուրեմն աղաչեմ, մի՛ նայիր երբէք
Ո՛չ միայն առիս, այլ ո՛չ յստուեր իմ ։

### Ա՛Ռ ԶԱՒԵԼ ։

Լ Ա՛Ռ Տիկնայք և Պարոնայք առէք զիմ աւել,
Զի յարմար են նոքա 'ի սենեակս պահել ·
Բերի զայն ես յուսով 'ի Գերմանիոյ ,
Զի աղքատ աղջըկան լիջիք ձեռնտու ։
Ա՛ռ զաւել , ա՛ռ զաւել , ա՛ռ զաւել
յաղքատ ա՛ղջկանէն ։

Պարոնայք ինձ հաղիպեալ ասեն , կա՛յ ա՛ղջիկ ,
Վաճառես զիւրազգին զաւելս քոյ , քա՛ղցրիկ ·
Տիկնա՛յք դուք ևս առէք , են յոյժ պատուական ,
Ո՛հ առէք դուք զաւելս աղքատիկ աղջկան ։
Ա՛ռ զաւել , և այլն ։

Եւ յորժամ յիմ յերկիր դառնամ վերստին ,
Քաղցր են ինձ բարեկամք Թողուլ ձեզ ցաւիմ ·
Յիշեցից զերախտիս ձեր ես յաւիտեան ,
Զի շընորհս արարիք աղքատիկ աղջկան ։
Ա՛ռ զաւել , և այլն ։

### Ա՛Ռ ԶԱՄԲԻՒՂ ։

ԳԻՒՂԱԿԱՆ աղջիկ եմ ես զամբիւղաշէն ,
Եկեալ աստ զամբիւղովք 'ի Հայոց երկրէն ·

Յուսամ զի Հայ Տիկնայք և Պարոնայք Հնդկաց,
Բարձըր զին տայեն իմ սիրուն զամբիւղաց ։
Առ զամբիւղ, առ զամբիւղ, առ զամբիւղ,
Յօտար աղջկանէն ։

ԶԱրարատ, զՏիգրիս և զԵփրատ Թողի,
Միայնակ շրջիմ աստ յեզերս Գանգէսի ․
Պանդուխտ եմ, օգնեցէ՛ք անտերունջ անձին,
Զի ծնողք ձեր յառաջ՝ աստ պանդուխտ էին։
Առ զամբիւղ, և այլն ։

Զամբիւղք իմ են յարմար ասղնեգործութեան,
Պահել անդ զմատնոց, զթել, և զասղամն․
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսին,
Մինչ զառինք և ոչխարք զինև խաղային ։
Առ զամբիւղ, և այլն ։

Գանձ բազում, ցաւք բազում կան յայս աշխարհի,
Պէտք սակաւ, ցաւք սակաւ են յիմում գեղի․
Զայգի մի ունէի, զամբիւղ գործէի,
Լոկ կաթամբ և պտղովք երջանիկ էի ։
Առ զամբիւղ, և այլն ։

Աստ ծիրան, սերկևիլ, և խաղող չկայ,
Բայց միայն փափկայ, քիւայ և սոսայ ․

Ե՞րբ իցէ ․ զի արժան եղէց վերստին ,
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին ։
Ա՛ռ զամբիւղ և այլն ։

Ապա դուք լծու տիկնայք զամբիւղս իմ առէք ,
Գիւղական աղջկան սիրով օգնեցէք ․
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք
Զերախտիս ձեր առ իս գովեցից բազմօք ։
Ա՛ռ զամբիւղ , և այլն ։

---

ՄԵՍՐՈՎՊԵԱՆ ԱՇՆԱՆ ԱՌԱՒՕՏ ։

Ա՜հ աշնան առաւօտ սրտի իմոյ զարդ ,
Դու բարեաւ ծագեցար ինձ բերկրութիւն արդ ․
Արեւուն կարապետ քոյ պայծառ դիմաց ,
Տամ սիրտ իմ սիրովին պատարագ կամաց ։
Ա՛ռ իբրու , ա՛ռ իբրու , առ իբրու նուէր կնդրկաց ․

Թորթորեալ հովլու զով ցօղով գիշերեան ,
Շողշողաս գոյն ըզգոյն որպէս ծիածան ․
Դու հոգի սոխակին , դու շունչ ես վարդին ,
Դու և քո քերթողին քո սիրահարին ։
Ես իբրու , ես իբրու , ես իբրու Ադին երկնային ։

Նոր աւուր տուընջեան դժխոյ քրքմազգեաց ,
Գաս բազմեալ տիկնօրէն 'ի վարդագոյն կառս ·
Անիւք քո աստեղունք , երիվարք հողմունք ,
Փողար քո մուզայք են , և ծառայք ցուլմունք·
Ես խըրու , ես խըրու , ես խըրու քո գեղոյ ստրուկ :

## ՇՐՋԵՐ ԱՆՀԱՆԳԻՍՏ :

'Ի մէջ ճանապարհի տես քո սիրածի հալն ,
Որպէ՛ս շրջէր անհանգիստ վասն քո քաղցր տեսուն : ( Կրկնէ՛ )

Նայէր քո սիրելոյն սիրոյդ է միշտ արթուն ,
Ողբալով խնդրումէր վասն քո քաղցր տեսուն :
( Կրկնէ՛ )

Աղորդ որ ջահէլաս , դու ինձ կարօտ պահումաս ,
Մին դու մտածում չես , թէ աշխարհս ճում կըմնայ : ( Կրկնէ՛ )
Աւաղ օրըս էհաս խեղճ և ողբալի մնացի ,
Վասն քո քաղցր տեսուն այժմս կարօտ մնացի :
( Կրկնէ՛ )

Մարդոյս կեանքն է վայրի , 'ի մէջ ունայն աշխարհի ,
Միայն թէ կըմնայ քո սէրըն ինձ յիշելի :
( Կրկնէ՛ )

## ՆԱՇԽՈՒՆ ԲԼԲՈՒԼ։

Սիրով. հարցուր նաշխուն բլբուլ,
Կարօտամ ես կնկուղ վարդիդ։

Տարբերութիւնս ինձի բռնէց ,
Սիրելուցս ինձ բաժանէց։

Նման տատրակի ես դարձայ ,
Վարդիդ վերէն ես շիլացայ։

Ջահէլօս դու խաթուն ջանի ,
Քո սէրըն ինձ կուսըպանի։

Աղաչանօք ՚ի քէն խնդրեմ,
Զըլթողուս զիս կարօտ մեռնեմ։

Ջըվան ումրըս յանցայ կալման ,
Ես ամ քո հէշխիցըն լալման։

Նուրայ իմ քո տեսած զարդն ,
Զորամանայ այգուդ վարդն։

Զարմանալի էր մեր սէրն ,
Մշտապէսի քո ընկ՚րըն։

Բոպէ բոպէ ես կու խնդրեմ,
Որ սիրելուս ուրախ տեսնեմ։

Մոմէրում սիրտըս վառածայ ,
Քո խօսքէրըն սիրուն թարայ ։

ՇՐԹՈՒՆՔԴ ԼԱՒ ԳԻՆՈՅ ԹԱՍԱՅ ։

ՅԱՏԿԱՊԷՍ քեզի սիրէլամ,
Սեւովդ յոյժ խորովվէլամ։

Ունիմ սէր , քո սրտին հարցի ,
Ուրախ դէմքըդ առ ինձ դարձի ։

Վասն Քէր աս պահում ինձ լալով ,
Վաղայ անեմ երկու տարով ։

Հարաս լուս դէմքըդ գողումաս ,
Հայիֆ մէջ սրտիս դաղումաս ։

Աննման տեսօք ես փէրի ,
Աչքերիդ ելէլամ գերի ։

Նազովըդ ինձի էրումաս ,
Նռան ծառ սրտիս տիրումաս ։

Էս ջաբրըն ինձի հալասայ ,
Շրթունքդ լալ գինոյ թասայ ։

Սիրակա՛ն , սիրով աննման ,
Սիրոյդ ծով ընկայ բեզուման ։

Յատկապէս քեզ որ տեսմանամ ,
Ծածուկ սիրով տապակմանամ ։

Նարգիզըդ հոգիս կու հանէ ,
Նոր սիրողդ ռահըմ կընկանէ ։

Է՛ զալըմ սէր ունես սա՛ ,
Շրթունքըդ լալ գինւոյ թասայ ։

Ա՛յ անիրաւ չո՞ւմ չես ասում ,
Սիրելոյդ կարօտաս պահում ։

Բախարար դէմքդ էրը դաղումաս ,
Սրտիս մէջըն դու դաղումաս ։

Իմ քնքշրիկ սէր կամըդ ասա ,
Սիրելուդ վերայ ողորմայ ։

Սիրոյդ յէշխէն ելայ գերի ,
Ասա սէր քո ինձ սիրելը ։

Մոռաման չեմ ես քո սէրըն ,
Ո՞ւմ ասեմ ես իմ դարդերըն ։

Մին մտածում չես դու ինձ համար ,
Որ ուզումամ քեզ անդադար ։

Աղորդ ասա միտըդ ինչմ՛յ ,
Իմ կամըն քեզ լա՛ւ յայտնիայ ։

Ես քո սիրէն չեմ կուշտաման ,
Սաստիկ սիրովամ տապակման ։

Տրտում սրտով մանամ զուլման ,
Մղամ թէ դու չե՛ս իմաման ։

Նարնջի դէմքըդ փայլմանայ ,
Սիրտս սիրովըդ հրմանայ ։

Փրկէր ինձ էս ցաւից շուտով ,
Որ կմեռնեմ համբերելով ։

Ո՞ աննման սէրդ իմ սան ,
Աչքէրըդ աստղի նմանայ ։

Ա՞յ զալըմ քեզ որ տեսմանամ ,
Ցաւերըս ողջ մոռամանամ ։

Սէ՛ր իմ , սէ՛ր իմ , ով աննըման .
Ինձ կըմընաս դու յաւիտեան ։

---

ՏԱՋԻ ԲԻ ՏԱՋ ։

ԱՌԱՒՕՏՈՒՑ ելնեմ լալով ,
Քո լոյս երեսին տամ բարով .
Ուրախ յերեսըդ նայելով ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ ։

Լոյս երեսըդ երբ գաղումաս ,
Ջգարիս մէջըն գաղումաս .
Սուր զանակով սպանումաս ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ ։

Դու վարդի ծառ, ես բլբուլամ,
Սիրոյդ էշխէն ես ուրախամ·
Վարդերդ բաց շատ սիրէլամ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Տուած ընծայդ պատուականայ,
Քան զվարդըն գոլականայ·
Լուսնեակի նման փայլմանայ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Գովեմ սիրելոյս ման ղալն,
Ճխլացոյց ինձ այդ նոր խալն·
Մ՝աէր սիրտըս, ահա իմ հալն,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Ա՛խ քաշելով մանամ զոլման
Սիրելն, քեզի գտանեմ·
Սրտիս փափագն լցուցանեմ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Յաւուր միում ես քեզ տեսայ,
Մէջ ջլխուամն բազմեալ տեսայ·
Սիրով սրտովս հաւանեցայ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Քանի ես քեզ կըճանանչեմ,
Թրմուշկէլաս էլ բացման չես ·
Զարմանքայ որ չիլաման չես ,
Ցաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Գձէլիր վարդագոյն շալըդ ,
Շողշողալով առ իս գալըդ ·
Շիլացոյց ինձ այդ նոր խալըդ ,
Ցաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Շատ սիրահար խեղճ բլբուլամ ,
Անուշահոտոյդ գերիամ ·
Որպէս ծարաւի ջրի ամ ·
Ցաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Ես քո սիրէն կուշտաման չեմ ,
Սէ՛ր քեզանէ բաժանման չեմ ·
Առանց քեզի դադարման չեմ ,
Ցաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Իմ սէրըն քեզ շատ հաստատայ ,
Նման արեւին փայլմանայ ·
Գաղէր սրտիդ որ լոյս չտայ ,
Ցաղէ բէ տաղէ նօվ բլնօվ ։

Սիրոյդ էշխէն ես էրվելամ,
Եա՛ր քո սիրէն մոլորվելամ.
Կեանքս կեանքիդ յետ կապելամ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Աչքէր ունես խումար խումար,
Յունքերըդ կապէլաս կամար.
Ես քո սիրէն եմ խելագար,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Կեռ․քնիդ անգլին մարգարիտ,
Թամամէլաս տասչորս տարիդ.
Մտնեմ բաղչէդ քաղեմ բարիդ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Մատնէր ունես մոմէ թախած,
Քեզլի նման էլ չեմ տեսած.
Լոյս քո սիրէն եմ ես հալած,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Ա՛խ քաշելով էս օրն հասայ,
Մինչև քո սէրն յաւել տեսայ.
Մեռեալ էի կենդանացայ,
Տաղէ բէ տաղէ նօվ բընօվ։

Րոպէ րոպէ ես տոժմանամ,
Ուրախութենէ զրկմանամ.
Էշխուղըդ ես մոլորմանամ,
Տաղէ բէ տաղէ նով բընով։

Ես կը ջոկվեմ քիզնէ լալով,
Վաշայ դըրի երկու տարով.
Կըթողում քեզ լալով լալով,
Տաղէ բէ տաղէ նով բընով։

Աշորդ որ ես գլորածամ,
Համ կենդանի՝ համ մեռածամ.
Տեսոյդ վերայ շիլացածամ,
Տաղէ բէ տաղէ նով բընով։

Հագիդ շորէրն կարմիր ալայ,
Քո պատկերըն թամամ խալայ.
Կարմիր թշէրըդ ինձ արա,
Տաղէ բէ տաղէ նով բընով։

Բարունապետն տիեզերաց,
Արժան արացէ քեզ իւր փառաց.
Ինձ և ս քեզ հետ միաւորած,
Տաղէ բէ տաղէ նով բընով։

## ՅԵՐԵՍԱԼ ԱԿԱՄԲ ։

ՅԵՐԵՍԱԼ ակամբ պատուականօք
կորուսեալ եմ Սիրելիս ·
Նորաբողբոջ վարդագունեկ
հոտոտելի նազելիս ·
Նորա սիրոյն ելեալ յերկրէս
ղարիբ շրջիմ յայսմ երկրիս ·
Որպէս բլբուլ շրջիմ սարէ
'ի սար՝ վասն սիրելւոյս ,
Ոչ գտանեմ, ոչ գտանեմ,
գերի մնամ 'ի ձեռն սիրոյ կարօտոյս ։

Արուսեակն իմ, երեւակն իմ,
արեգակն իմ, լուսինն իմ ·
Խնդութիւն իմ, բերկրութիւն իմ,
հաճութիւն իմ, սէրն իմ ·
Նազելին իմ, պատուելին իմ,
Թագուհին իմ, թագն իմ ·
Որպէս բլբուլ , և այլն ։

Բազում անգամ փափագեցայ
տեսիլդ քո տեսանել ·
Բայց ոչ գիտեմ թէ յոր տեղ ես ,
որպէս կարեմ հասանել ·

Գ.

Իմ կարօտոյս ոչինչ օգնէ ,
  որպէս կարեմ դադարել ·
    Որպէս բլբուլ · և այն ։

Բախտական ինչ , ցնծութիւն ինչ
  ո՛չ գոյ բնաւին 'ի յիս ·
Սէրդ եղեաւ անդամանդեայ ,
  որպէս երկաթ քարշէ զիս ·
Քո սիրոյ կարօտութիւնն
  որպէս հուր եղեաւ այրէ զիս ·
    Որպէս բլբուլ · և այն ։

Անդադար՝ անդադար քեզ ձայնեմ
  և լամ եմ սիրելի ·
Եղկելի եղեաւ շրջիմ կարօտով ,
  սիրոյդ գերի ելի ·
Ձայնես առիս ծուր և էցես ,
  զամ տեսանեմ քեզ նազելի ·
    Որպէս բլբուլ · և այն ·

Հանապազ ողբամ և կոծամ ,
  որ հեռացար դու յինէն ·
Արժանապէս ողամ և կոծամ ,
  որ զրկվեցայ ես 'ի քէն ·

Ոչ համբերեմ այս եռանդիս
սէրս վառեալ է 'ի քէն .
Որպէս բլբուլ . և այն ,

Այդ աննման քաղցրադունեղ
պատկերդ՝ որ դու ունիս .
Գիշեր ցերեկ մտածելով՝
միշտ մտածեմ ես 'ի յիս .
Եւ ոչ գիտեմ զինչ ճար առնեմ ,
զի բոյժ լիցի իմ սրտիս .
Որպէս բլբուլ . և այն ։

Մէկ ակն՛ես յոյժ՛ գովելի ,
սէրդ սիրոյդ սրտակից .
Որոնելով՝ ոչ գտանեմ ,
եղեալ եմ յոյժ ցաւալից .
Կարօտոյս սէր սրտումս վառէ ,
ոչ գիտեմ զի՞նչ արարից .
Որպէս բլբուլ . և այն ։

Ե՞ր աննման զեր գեղեցիկ ,
Նազելոյս կորուսեալ եմ .
Նորա սիրոյն սիրով փափագեմ ,
սիրահարեալ եմ ։

Որպէս երգնակ կարօտալի ,
Իմ աննման վարդս խնդրեմ.
Որպէս բլբուլ. և այլն ։

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՍԻՐԱՀԱՐԱՑ ։

ՈՂՋՈՅՆ դառնութեան
Հոգւոյս եկի մատուցանել ,
Եւ առնուլ զհրաման 'ի քէն
առ 'ի ծով մտանել ։

Աւաղաբեր խնդիրդ քո
սիրտըս խոցոտէ ,
Հոգիս իմ ելեալ տեղէն
արեան վտակ հոսէ ։

Ես ո՛չ գիտեմ զի՞նչ ժամ էր այն
յոր մեք իրար տեսաք ,
Զի այժմս սաստկագին սիրով
այսպէս շաղկապեցաք ։

Ես ոչ երբէք մտածեցի
որ յինէն կհեռանաս ,
Եւ անբժշկելի վէրքն
իմ սրտիս կըբառնաս ։

Աւա՜ղ աւա՜ղ ինձ եղկելւոյս
որ այսօր կըհեռանամ ,
՚ի թևէն ցանկալւոյն իմոյ
ահա՛ ՚ի բաց գընամ ։

Ո՜վ անողորմ սիրահար ,
զիմ՞րդ այդքան ողբաս .
Աղէկատոր հեկեկանօք
ծըքան ողո՜րմ լաս ։

Ես ո՛չ հոգամ զկեանս իմ,
և ոչ կորուստ անձին .
Այլ երկնչիմ խորտակիցես
խորհուրդն իմ սրտին ։

Լե՛ր դու յինէն յոյժ մխիթար
և անկասկածանօք ,
Ուշօք կարէ զիս պատրել
այլ իմն օրինակօք ։

Որովհետև ծնար դու
վասն իմ, սիրելի՛ Տիկին ,
Տո՛ւր ինձ նշան հաստատութեան
սիրոյ քո մատանին ։

Ը՛ւ լինէի զմատանին
և զե՛ր 'ի քո մատին ,
Յորժամ տեսցես զայս մատանին ,
յայնժամ յիշեսցես ինձ ։

Ահա՛ երթամ ես իմ սիրելի
և ցանկալի Տիկին ,
Զի նաւն նշանաւ իւրով
կոչէ զիս յիւր փորին ։

Նայեմ երկինք՝ և այս ահեղ
և սարսափելի ծով ,
Խնդրեմ 'ի Տեառնէ քեզ տարեալ
բերցէ ապահով ։

Ահա՛ եղէ ես նման Տատրակի
զոյգն կորուսեալ ,
Եւ ելեալ 'ի քէն գնամ
որպէս մոլորեալ ։

Փրկի՛չ համայն աշխարհի ,
ըզգա քե՛զ աւանդեմ ,
'ի Ներքոյ Թևոց քոց տանել
զքեզ յարաժամ մաղթեմ ։

## ԵՐԳ ԲԻՒԼԲԻՒԼԻՆ ։

ՅԱՐՈՒՑԵԱԼ Բիւլբիւլին 'ի մէջ գիշերոյն ,
Ասէր , ո՛վ եղիտ՝ եղիտ զսէրն իմ քաղցրագոյն։

Որոնէր անհանգիստ 'ի մէջ իւր այգւոյն ,
Ըշտապով ճեմէր՝ ճեմէր 'ի սէր ցանկալւոյն ։

Վայելուչ ձայնիւ երգէր յոյժ համեղագոյն,
Մի՞ թէ դուք տեսիք՝ տեսիք զսէրն իմ
քաղցրագոյն ։

Հետ շաւղին ընթացեալ փութով վաղագոյն,
Յուզելով պարէր՝ պարէր 'ի սէր ցանկալւոյն ։

Առ իս նայեցէք՝ ասէր , պահապանք այգւոյն ,
Եկեալ ո՛վ եհատ՝ եհատ զվարդն իմ
քաղցրագոյն ։

Նազելի վարդէն սիրոյն լայր խիստ դառնագոյն,
Ողբալով գոչէր՝ գոչէր 'ի սէր ցանկալւոյն ։

Է՛ իմ ողորմած Աստուած՝ Տէր կարողագոյն ,
Վերստին տուր ինձ , տուր ինձ վարդն իմ
քաղցրագոյն ։

Սոյնգունակ մաղթեմ և ես Տէրն բարձրագոյն ,
Դարձուսցէ զգերիս՝ գերիս 'ի մեղաց գործոյն ։

ՔԱՂՑՐԱԳՈՅՆ ՎԱՐԴ ։

Սիրտ իմ անդադար եղև սիրահար ,
Առնէ զիս աւար , շրջիմ խելագար ։
Վարդ , վա՛րդ , վա՛րդ ։

Իմ սիրական Վա՛րդ , արա ինձ զուարթ ,
Սիրոյդ եմ աղքատ , ո՛վ երկնագոյն վարդ ։
Վա՛րդ , վա՛րդ , վա՛րդ ։

Բամ խոցեալ ցաւով , աղաչեմ սիրով ,
Լեր ինձ ապահով , իմ զուարճական վա՛րդ ։
Վա՛րդ , վա՛րդ , վա՛րդ ։

Երեսըդ պայծառ , ծով աչքերդ վառ ,
Յունքերըդ կամար , մոլորէ ինձ վա՛րդ ։
Վա՛րդ , վա՛րդ , վա՛րդ ։

Լալով աղաչեմ, սիրով պաղատեմ,
Ցաւերս ասեմ, մին ճար արա՛ վա՛րդ ։
Վա՛րդ, վա՛րդ, վա՛րդ ։

Զի վասն քո եմ, յուսով քեզ դիմեմ,
Վա՛րդ քեզ մեռանիմ, շուտ հասի՛ր ինձ վա՛րդ ։
Վա՛րդ, վա՛րդ, վա՛րդ ։

## ԾԱԳԵՑԱՐ ։

ԾԱԳԵՑԱՐ զերթ արուսեակ,
սէր իմ դու գեղեցկաձայն պսակ,
Դէմ քո յաղթօղ հրոսակ,
քաջ պարթեւահասակ,
Ո՛հ կարմրատեսակ սէր իմ,
՚ի սրտիս հեղուսակ ։

Դիւցազնական քոյդ դրակ,
սէր իմ, ոսկէթել վարսիդ պլակ,
Սիրտ իմ բարձեր արագ,
ետուր սիրոյդ ճարակ,
Ո՛հ տոչորիմ արագ,
յառեալ ՚ի գեղ քո միակ ։

Սէր քո ուժգին քան զմագնիս ,
  սէր իմ վառի մինչ յինէն մեկնիս ,
Կրեմ զտենչ քո յիս ,
  ծրարեալ ՚ի հոգիս ,
Ո՛հ ցնծայ իմ հոգիս ,
  մինչ տեսանեմ զքեզ առիս .

Զխորհրդով քո մինչ յածիմ ,
  սէր իմ , սերտ սիրով քով զգածիմ ,
Թանձր հոգով մտածիմ ,
  սրով սիրոյդ խոցոտիմ ,
Ո՛հ ՚ի վրանս ածիմ ,
  խնամօք սիրոյդ լոկ տածիմ .

Ցաւօք սիրոյ քոյ յածիմ ,
  սէր իմ , կաթոգին ըղձիւ կոծիմ ,
Արի՛ շիջի՛ զբոց իմ ,
  զբորբոքեալ հնոց իմ ,
Ո՛հ մոխիր ՚ի ծոց իմ ,
  և զովացո՛ զբոց իմ .

Դիրդ զերագանց զեր ամխոյժ ,
  սէր իմ ցանկալի , հոգւոյս իմ յոյժ ,

Բարձաւ յինէն յոյս ,
վասն այն առնեմ զգոյժ ,
Ո՜հ ՚ի քէն է ինձ բոյժ ,
տառապեալ սրտի իմ ոյժ ։

Զակատեալս Եփրեմ պետակ ,
սէր իմ, սիրոյդ չէի գիտակ ·
Ձի է ՚ի խորայատակ ,
կամքդ ախորժ դիպակ ,
Ո՜հ յարմարատեսակ
զովիչ յո՛րդ վտակ ։

ԱՆՈՒՇԱՀՈՏ ՎԱՐԴԻ ՏԵՐԵՒ ։

Դու որ եկիր երեւեցար ,
Իբրեւ արեւ ինձ ծագեցար ·
Ցնծութիւն ինձ պարգեւեցար ,
Մի՛ մոռանար իմ սիրելի ։

Իմ աննման , իմ լո՛յս արեւ ,
Անուշահոտ վարդի տերեւ ·
Լալով տամ քեզ , եւ ա՛ռ բարեւ ,
Մի՛ մոռանար իմ սիրելի ։

Իմ ազնիւ երամ երամ ,
Իմ գեղեցիկ վարդ անթառամ .
՚Ի քոյ երկրէն ես կու գընամ ,
Մ՚ի մոռանար իմ սիրելի ։

Արի իմ քաղցրիկ աղաւնի ,
Ոսկէխնձոր զարմանալի .
Քո տեսնողին բիւր երանի ,
Բարի եկիր , իմ սիրելի ։

ՎՐԱՍՏԱՆԱՑ ԳՕԶԱԼՆԵՐՆ ։

Գ.ՈՎԵՄ սրտիւ ուրախական ,
Թիֆլիզ քաղաքըն պատուական .
Ցոյժ գեղեցիկ և սիրական ,
Վրաստանայ գօզալներն .
Ա՛յ Վրաստանայ գօզալներն ,
Հէն Թիֆլիզու խաթուններն ։

՝Նանքան ունեն ղուղրաթի համամ ,
Միջի խաթուններն թամամ .
Սպիտակ բօխախ բոլոր շամամ ,
Վրաստանայ գօզալներն . Եւ այլն ։

Աչքեր ունեն շամս ու ղամար ,
Յունքերըն կապել են կամար .
Կապելըն Մուրասայ կամար ,
Վրաստանայ գօզալներն . Եւ այլն ։

Ծամերն դաստայ ոլորած ,
Ցերեսին լուսին բոլորած .
Շատ մարդ է տեսած մոլորած ,
Վրաստանայ գօզալներն . Եւ այլն ։

Սիրելան եարին պատուական ,
Ունեն ժառանգ արուական .
Արժանիան Թագաւորական ,
Վրաստանայ գօզալներն . Եւ այլն ։

Մէջլիս նստեն համով դամով ,
Գինի խմեն ոսկէ ջամով .
Որ քան զշաքարըն համով ,
Վրաստանայ գօզալներն . Եւ այլն ։

Զարբաֆ են հագել բարաբար ,
Սամուր փալամփուշ սարըսար .
Ողջն էլ սիրուն մի հաւասար ,
Վրաստանայ գօզալներն . Եւ այլն ։

Հաղէլին դը-մաշ ու խառայ ,
Ունեն շատ ղարավաշ և ծառայ ․
Խազըլըն լաւ կանաչ խառայ ,
Վըրաստանայ գօզալնէրն ․ Եւ այլն ։

Ես Նաղաշն եմ ձեզաց ծովէն ,
Նորանց սիրավըն զինավ եմ ,
Խըրար չեմ թէ ինչպէս զավեմ ,
Վըրաստանայ գօզալնէրն ․ Եւ այլն ։

ՍԻՐՈՅԴ ԿԱՐՕՏԻՄ

Ո՛վ սէր իմ, սիրոյդ կարօտիմ, ( Կրկնեա՛ )
Թարց տեսոյդ ես ոչինչ լինիմ ․
Արև էջ ընդ իս՝ յայգին իմ,
Ուրախ լեր թէ ոչ թառամիմ ։

Արտուտըն ցանկայ իւր վարդէն , ( Կրկնեա՛ )
Եւ հարսն լանջազեղ զարդէն ․
Այլ և ես քոյդ ազնիւ անձէն ,
Զի դու ես իմ սիրոյ բաժէն ։

Ո՞վ Բրիտոնս լեր դու օգնական , ( Կրկնեա՛ )
Սիրելի ( այս անուն ) մերոյ պատուանկան ․

Տացէ Տէր զկեանս խաղաղական ,
Ընդ Աստուած յաւիտենականն:

Արդարեւ այր երեւելի ,  ( Կրկնել )
Եւ յաւէտ բազմայ ցանկալի .
Այլ և ես մերժեալս խղճալի ,
Քոյդ սիրոյն եմ կարօտալի:

### ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀՐԱՄԱՆ ՏԱՑՈՒՔ .

ԱՇԱԿԵՐՏԱՑ հրաման տացուք ,
Եւ պար առեալ զայս երգեսցուք .
Թասերն ամէն զինեաւ լցցուք ,
Եւ մատռուակսըն գոչեսցուք .
Ուէր ռէռէ , ռէր ռէռէ , ռէր ռէռէ , ռէ
ռէ ռէ ռէ .

Բամեալ եղբարք 'ի միասին ,
Առնուլ բաժակ գինւոյ Թասին .
Եւ յամօքել Մարմնոյ մասին .
Կեան ըստ տառին ժամ է արդէն .
Ուէր ռէռէ , և այլն .

Սէրն ամէն վայելեսցուք ,
Եւ մատռուակըն գոչեսցուք .
Բազմեալ եղբարցն պարգեւեսցուք ,
Համայն սրտիւ կեանս մաղթեսցուք ։
Բւէի ռէռէ . և այլն ։

## ՆԱՇԽՈՒՆ ԿԱՔԱՒ ։

ՓՈՒԹԱ՛ առ մեզ Նաշխուն կաքաւ ,
Սարերն ամէն կանաչացաւ .
Ջարդ զգեցեալ պայծառացաւ ,
Ցայդ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Յաւուրս գարնան պարեալ ցնծաս ,
Նաշխուն ձագերով շուրջ կուգաս .
Արագ արագ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելո՛վ ։

Վասն է՞ր թռչիս , ընդէ՞ր փախչիս ,
Կամ զի՞ թագչիս կողկողալով .
Զայն արձակես յոյժ փարելի ,
Միշտ հառաչես և կարկաչես ։

Ոսկեփայլ փետուրք քոյին ,
Զանազան գունով շողշողին .
Որպէս լուսին բոլորովին ,
Յայդ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Փառօք ճեմիս որպէս իշխան ,
Լերինք միան քեզ յարկ սեփական .
Դաշտերն ամէն համանգամայն ,
Յայդ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Ծիծաղաձայն քաղցրէկ թռչուն ,
Զքնաղատիպ և յոյժ սիրուն .
'Ի մէջ ծաղկանց ննջես 'ի քուն ,
Յայդ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Այդ լեռներու հուպ առընթեր ,
Դէպ զառ 'ի վայր և զառ 'ի վեր .
Թևաբաց թռօք ճեմս առեր ,
Յայդ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Կարկաչական այդ ձայն քո նուրբ ,
Տոչորէ զիս սիրոյ քո հուրբ .
Եւ զովանալ արտասուաց ջուրբ ,
Յայդ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Քև ճոխանան համայն լերինք ,
Եւ համօրէն մարգագետինք ·
Ըղ քեզ գովեն ազգ և ազինք ,
Յայտ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

Արդ բարձրացո՛ ձայն քո ընդ իս ,
Եւ փարատեա՛ զուգ սրտիս .
Հայցմամբ քոյոյ երգարանիս ,
Յայտ լեռներէն 'ի վայր փութա՛ ։

ՍԷՐ ԻՄ ԱՐԻ՛ ։

Արի՛ եկցո՛ւք 'ի միասին ,
Ուրախութեամբ մտցուք յայգին ·
Ըզմայլեցուք տեսլեամբ վարդին ,
Ո՜հ · արե՛ արե՛ , սէր իմ արե՛ ·
Ցնծամք 'ի մէջ կարմիր վարդին ։

Հանդերձեալ կանդնէ բիւլբիւլին ,
Յարշալուսե՛ յառաւօտին ,
Ողբս յօրինէ վասըն վարդին ,
Ո՜հ · արե՛ արե՛ , սէր իմ արե՛ · և այլն ։

Կայսրապէս պսակ 'ի գլուխ
  փառօք ճոխացան ,
Շաղահիւս մարգարտաշար
  Թագիւ պճնեցան ․
  Ո՛վ Տէր իմ, և այն ։

## ԲԼԲՈՒԼՆ ԵԿՆԱՒ ։

'Ի ԳԱԼ գարնան եղանակին ,
  Բլբուլն եկեալ շրջէր յայգին ․
  Թևասքօղէր բոլոր վարդին ,
  Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
  Ես բլբուլ դու վարդ ։

Սիրով այգին կմլոանէր ,
  Վարդըն պայծառ կտեսանէր ․
  Նորա սիրոյն կմեռանէր ,
  Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
  Ես բլբուլ դու վարդ ։

Փափագելով վարդի տեսոյն ,
  Հսկէր մինչև հաւախօսուն ,
  Թարթէր ակամբ բացուել լուսոյն ․
  Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
  Ես բլբուլ դու վա՛րդ ։

Թիւր երանի՜ վարդին ասէր ,
Ծաղիկ պայծառ՝ քաղցր ձայնէր ․
Տխուր դիմօք աչացն հայէր ,
Գոչելով աղաղակէր , վա՛րդ վա՛րդ վա՛րդ ,
Ես բլբուլ դու վարդ ,

ՔՈՅ ՁԵՌ՛Ն ՉԻ Ը՛ՆԿԱՄԱՆ ։

ԳԱՄ և պատմեմ իմ անցքն ,
Թէ ո՛րպէսայ իմ ջանքն ․
Ա՛յ ջիվան պատմեա՛ ինձ ,
դու ես Նըման վարդի ․
Ո՞վ սիրելի , իմ Նազելի ,
դու ես Նըման վարդի ․
Սիրելի մի՛ տրտմել ,
մի խորհել վատ կամքի ․
Չէ՛ւ չէ՛ւ չէ՛ւ, ա՛յ չէ՛ւ չէ՛ւ չէ՛ւ ,
քո ձեռն չի ընկաման ։

Ես ոչ ունեմ շատ կամքն ,
Թէ ո՛չ միայն սէր և փառքն ․
Ամաչմանամ քեզ ասել ,
իմ կա՛մքն քեզ պատմել ․

Ասա՛ դու իմ սիրելի՛ ,
մի՛ ամաչել պատուելի՛ ․
Կամքիդ պէս կամիմ երթալ,
քո ձեռքին հնազանդ կալ․
Չե՛ւ չե՛ւ չե՛ւ, ա՛յ չե՛ւ չե՛ւ չե՛ւ,
քո ձեռն չի ընկաման ։

Ուրախ սրտիւ ուրախանամք ,
ես և դու ամուսնանամք ․
Ես կընդունեմ քո կամքին ,
բայց սպասեմ ծնողիս հրամանին ․
Ես կերթամ կըխնդրեմ ,
մեր սէրըն կըկատարեմ ․
Տէ՛ր գնա՛ , շո՛ւտ արա՛ ,
եկ ինձ էլ ուրախ արա՛ ․
Չե՛ւ չե՛ւ չե՛ւ, ա՛յ չե՛ւ չե՛ւ չե՛ւ,
քո ձեռն չի ընկաման ։

Ծառայեմ քեզ սիրելի՛ ,
ծնողիս հրաման բերի ․
Բարի ճանապարհ պատուելի՛ ,
խօսքդ լինի հաճելի ․
Բարով քեզ , իմ ցանկալի՛ ,
բերի հրաման ցնծալի ․

Ցնծացայ ես քո խօսքին ,
քո բերած ուրախ լուրին .
Շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ, ա՜յ շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ,
քո ձեռն չի ընկաման ,

Սպասեմ սէր մին պաչին ,
իմ բերած ուրախ լուրին .
Չեմ խնայում քո խօսքին ,
տուր ինձ քոյ մին պաչին .
Քո պաչն ինձ ալդաւ շինեց ,
քո սէրըն սիրտս վառեց .
Թէ մեր սէրն հաստատայ ,
ուրախ կեանք մեզ համարայ .
Շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ, ա՜յ շէ՜ւ շէ՜ւ շէ՜ւ,
քո ձեռն չի ընկաման ,

Եկ գնանք եկեղեցին ,
հնազանդեմք մեր օրէնքին .
Տէրաս դու դարձէլ ինձ ,
դար խբարաս՝ արա՛ ինձ .
Շնորհաւոր լինի մեզ ,
Աստուած պահի հաստատ քեզ .
Այս խաղըս ձայնով ասէք ,
վերոյինըն իմացէք .

Հե՜ւ հե՜ւ հե՜ւ, ա՜յ հե՜ւ հե՜ւ հե՜ւ,
քո ձեռն չի ընկամա՜ն։

ՄԱՆՈՒԿ ՔԱՂՑՐԱԳՈՅՆ։

Ողջոյն երկնային լցեալ աւետեօք,
Առ ձեզ տեսանի այսօր պարառեալ.
Եւ բնութիւն երկրիս իւր օժանդակօք,
Ելից ցանկութիւն սրտի ձեր պառքեալ։

Պարգևելով ձեզ մանուկ քաղցրագոյն,
Որ է կապ սիրոյ և ամուսնութեան.
Որով յուսադրեն ձեզ վայելելոյ,
Խաղաղ և անհոգ հասակ ծերութեան։

Տեսանեմ ծիծաղ ՚ի դէմս համայնից,
Որք խմբեալք են աստ, յոյժ յօժարակամ.
Ուրախութեան ձեր լինել խնդակից,
Տարփանօք ջանամ՝ որպէս բարեկամ։

Փարին ցնծութեամբ ՚ի վկայութեան,
Հաստատ և անկեղծ բարեկամութեան.
Խնդրելով Տեառնէ ՚ի խորոց սրտի,
Ունիլ ձեզ ենթ իւր Նախախնամութեան։

Նաեւ ընդունել զերկնային ձեր ,
Արժան առնելով լինել 'ի հանդէս ·
Ընդ սիրելեաց իւր սիրով կարասցէ ,
Տանել յարգութեամբ զանուն Յովհաննէս ։

## ԲԱՑՈՒԻՐ ԲԱՑՈՒԻՐ ։

'Ի ԳՆԱԼ գարնան ես քեզ կարօտ մնացի ,
Որոն ելեալ 'ի գլուխ լերանց գնացի ·
Զքեզ ոչ տեսեալ ես սուգ առեալ յոյժ լացի,
Հեծեծանօք յօգւոց հանեալ ասացի ·
Բացուիր բացուիր իմ կարմիր վարդ աննման ,
Գեղդ նման արեգական վառվառման ։

Գ, ամբար լուսոյդ՝ 'ի Պաղեստին երեւեալ ,
'Ի Գողգոթա 'ի սուրբ լերին փայլեցեալ ·
Զոր իմ տեսեալ զմահուն տանջան մոռացեալ,
Որով զԵւա մայր կենդանեաց կոչեցեալ ·
Բացուիր բացուիր և այն ։

Ընծառ խորհուրդ 'ի քեզ շնորհեալ Անեղէն ,
Կանաչ , կապոյտ , կարմիր նման աղեղէն ·

՚Նշան սիրոյ աշխարհակուլ հեղեղին ,
Խաչաձեղուն տապան Նոյեան հօր մեծին ·
Բացուէ՛ր բացուէ՛ր և այլն ։

Զարմանալի զխորհուրդ ետես Աբրահամ ,
Զիւր միածին յորժամ տարաւ ՚ի զենման ·
՚Ի բորբոքել ողջակիզին ճենճերման ,
Տունկ գեղադէշ գեր քան զծառն Սաբեկայն ·
Բացուէ՛ր բացուէ՛ր , և այլն ։

Անուշահոտ վարդ գեղեցիկ ծառ ծաղկանց ,
Կարմիր սպիտակ նման ծառոց կուսանաց ·
Թագ փեսայից զարդ նորասքանչ Թագուհեաց,
Խնձոր բարձից, գեղդ վարսից սուրբ հարսանց ·
Բացուէ՛ր բացուէ՛ր , և այլն ։

Բամեաւ խաշանց խօսուն գառանց Յակոբեանց ,
Խայտացուցիչ ճամուկ գունով զանազան ·
Փայտ սիրուն քերծուն արկեալ յաւազան ,
Որդխաբաշխ մանրագորի Ռաքելեան ·
Բացուէ՛ր բացուէ՛ր , և այլն ,

Վ, արդեղդ վառեալ նման գիմաց Մովսէսի ,
Քաղցրիկ բիւլբիւլն ՚ի քեզ բնակեալ միշտ խօսէ ·

Ո՛վ. շափիղայ տեղի ոտիցն Յիսուսի ,
Տենչայ սիրոյ միաւորիլ իմ հոգի ․
Բացուե՛ր բացուե՛ր և այն ։

Արքայն Դաւիթ ըստ Սոմնայի սուրբ կուսին ,
Զքեզ փունջ գործեալ 'ի մի մանիշ հոտհոտին ,
Քոյդ զօրութեամբ ջեռեալ պահիւր ծերունին ,
Թերթիկ անճառ անհասական քան զերկին ․
Բացուե՛ր բացուե՛ր ․ և այն ։

Բարուն Ղազար 'ի սերդ վառեալ գայս երգեաց ,
Տկար բանիւ զքեզ դրուատեալ ներբողեաց ․
Ո՛վ փայտ մաքուր միջնորդ ընաւեց մերշնորհա․
Արժանացո՛ զիս քո մաքուր պսակաց ,
Բա յուե՛ր բացուե՛ր և այն ։

Դրախտին լուսոյ փակեալ դրան բանալի ,
Քառակերպեան աթոռ վերնոյս սերալի ,
Տունկ տարրական զեր․ քան զերկին գովելի ,
Նաւակ հրաշից գծեալ արեամբ կարմրալի ,
Բացուե՛ր բացուե՛ր , և այն ։

Արքայն երկնից ոչինչ խմ․ք հաւատեալ ,
Այլ միշտ 'ի քեզ անքակ սիրով բնակեալ ․

Ցանկարծակի փայլատակեաց ,
Եւ որոտմամբըն անձրեւեաց ․
Ու տուն դառնալ աճապարեաց ,
Մինչ ոչ լըւըր ձայնըն ճիկ ճիկ ։

ՄՆԱ՛ՑՔ ԲԱՐԵԱՒ ԵՍ ԳՆԱՑԻ ։

Արդ հրամանաւ Աստուածային ,
Եկեալ բազումք ընդ փեսային ․
Կոչեալ ձեռաց զիս կուսանին ,
Մնա՛յք բարեաւ ես գնացի ․
Մնա՛յք բարեաւ ես գնացի ,
Շատ խնդացի և շատ լացի ։

Օրհնեմ զզուարթ քո ազնիւ Հայր իմ,
Մի՛ վշտանար թէ բաժանիմ ․
Հայրական գութդ ՚ի միտ ունիմ,
Կեա՛ս դու բարեաւ , ես գնացի ։
Կեա՛ց դու բարեաւ , և այլն ։

Օրհնեմ զուսո՛ր քո իմ անկե՛ն մայր ,
Որ շատ երկամբ դու զիս ծնար ․

Եւ հող տարար ինձ մայրաբար ,
Մնա՛ս բարեաւ և այլն ։

Ահա՛ տամ քեզ քո բանալին ,
Ա՛ռ զայս յինէն տաս քո հարսին ·
Շատ են փականք իմ փեսային ,
Մնա՛ս բարեաւ և այլն ։

Մա՛յր իմ սիրես լոյս Հաւատըն,
Մի՛ մոռասցիս քոյ զաւակըն ·
Հալալ արա՛ ճերմակ կաթըն ,
Մնա՛ս բարեաւ և այլն ։

Վաստակ կրեցիք զիս պահեցիք ,
Մինչ ցայս հասակս իմ հասուցիք ·
Ահա կամաւ դուք զիս թողէք ,
Մնա՛յք բարեաւ և այլն ։

Եղբարք և քորք իմ սիրական ,
Եւ ընտանիք ինձ պատուական ·
Մի՛ մոռանայք ինձ յաւիտեան ,
Մնա՛յք բարեաւ և այլն ։

Յօրէ յորմէ ծընայ յայս տան ,
Չէի մնալոց աստ յաւիտեան ·

Եղբարք լիցին հաստ սիւն այս տան ,
Մնայք բարեաւ և այլն ։

Արդ օրհնութեամբ Աստուածային,
Ամենեցուն դուստր և որդին ․
Արժան լիցին յայս պսակին ,
Մնայք բարեաւ, և այլն ։

ՄԱՅՐ ՑԱՆԿԱԼԻ

ՄԱՅՐ ցանկալի , հիանալի , յոյժ տենչալի ,
աննման ,
Ծաղիկ լուսոյ, անտանելւոյ դու երկնայնոյ
օթարան ․
Կոյս գովելի , երանելի , միշտ սխրալի ,
մարիամ ,
Մայր գովելի , լի լի լի լի , լի լի լի լի,
Մարիամ ։

Անապական, մայր խնկական, կոյս եղական
տիրուհի ,
Ընհամեմատ , և անարատ , կոյս գերատուատ
Թագուհի ․
Կոյս գովելի , և այլն ։

Յաւէտ բարի , փայլուն տեղի , միշտ բերկրալի
խնկուհի ,
Դու գերազանց, համայն ազանց, միշտ բերկ-
րութեանց դշխուհի ·
Կոյս գովելի , և այն ։

Տաճար փայլեալ, խորան կազմեալ, միշտ
փայլեցեալ սրբուհի ,
Անեղ Բանին , խնկականին, մայր Յիսուսին
թագուհի ·
Կոյս գովելի , և այն ։

Զքեզ աղերսեմք, յոյժ վեր երգեմք, աղաղա-
կեմք խնկուհի ,
Փրկել հայցեմք, 'ի քէն մաղթեմք, քեզ հա-
ռաչեմք մայր բարի ·
Կո՛յս գովելի , և այն ։

---

ՀԱՅԿ ԵՐԳ ։

Օ՛ն եկայք արի՛ Հայեր ,
Յիշեսցո՛ւք ըզնախնիս մեր .
Միաբան ելցո՛ւք 'ի վեր ,
Յիշելով զարին Հա

Հայր մեր Հայկ էր դիւցազուն ,
Եղիցո՛ւք նմին հանգոյն ·
Ազգ փոքրիկ , այլ քաջազուն ,
Է մեր քաջ Ազգըս Հայք ։

Հայկ երեք հարիւր ոգւով,
Միասիրտ որդւով Թոռնով,
Ջոկեց մեզ Հայ անունով,
Պարծանք մեր դու Հայկ ։

Գերեզմանք կոչէ դաշտն այն ,
Ուր Բէլըն ամպարտաւան ,
Եւ զօրք իւր անկան կործան ·
՚Ի բաղկաց քոց ո՛վ Հայկ ։

Արդ պնդեալ ըղձիրտս մեր ,
Հայաստան , որ է յաւեր ,
Կանգնեսցո՛ւք ՚ի փառըս մեր ,
Գոչելով փա՛ռք մեր Հայկ ։

Հօր մերում հետեւեսցո՛ւք ,
Սերտ սիրովըն կապեսցո՛ւք ,
Արժանի յայնժամ լիցո՛ւք ,
Հայր կոչել մեզ ըզՀայկ ։

## ԵՐԳ 'Ի ՁԱՅՆ

Թոմաս Դը Էֆըռըլէ Վօլըռ Երգոյն Անգղիացւոց։

Ո՞ւր երթայց որոնել ,
'ի հովիտ թէ 'ի ձոր ·
Ո՞ւր երթայց գտանել ,
Զանուշակ կեանս անդորր ։

Երջանիկ կենաց ծառ ,
Անյողդողդ ցվախճան ·
Յաշխարհիս 'ի թշուառ ,
Ե՞րբ տեսաւ , յո՞ր անկեան ։

Թէ ելից 'ի խնդիր ,
'ի պալատ Արքայի ·
Թէ ելից 'ի խնդիր ,
'ի տուն Շինականի ·

Հաւասար տեսանի
Երկնային բաժանումն ·
Մեծըն մեծ ցաւ ունի ,
Փո՛քր է ցաւ և փոքուն ։

Միաբան ։ Ո՞ւր երթայց , Մինչ Յո՞ր անկեան ։
Փառք , պատիւ , ճոխութիւն ,
Զառողջ կեանս , և որ էն ·

Կրճատ է Բախտի թիւն ,
Եւ Նախանձ պղտորէն :

Իսկ բաժին աղքատի ,
Սիրտ և միտք անվրդով .
Ընդ կորուստ՝ զոր չունի ,
Ոչ ցաւի հաշւելով :

Օ՛ն ուրեմն երջանիկ ,
Տառապկենաց ՚ի յերկրի ,
Մի՛ երբէք համարիք ,
Մի՛ զմարդ՝ և ոչ մի :

Ձե՛ք երբէք երջանիկ ,
Ծառ կենաց յայս երկրի .
Որոնել թէ կամիք ,
Ճեպեսցո՛ւք ՚ի յերկին :

Մխիթար Ո̂ւր երթայց :

---

ԷՋՄԻԱԾԻՆ :

ԷՋՄԻԱԾԻՆ կաթուղիկէ նորոյս Սիոնի ,
Երկրորդ տապան երևեցաւ սրբոյն Գրիգորի .
Լուսացնցուղ աղբիւր շնորհաց Հայաստան ազգի ,
Արբուցանէ ծարաւելոց շնորհիւն Յիսուսի :

Էջմիածին զուշակեցաւ հինն Իսրայէլի ,
Խորհրդաբար անուանելով աստ զդուռն երկնի .
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին ջրհոր երդման Յակոբայ վեհի ,
Կենդանութեան աղբիւր բղխեալ 'ի սմա տեսանի .
Լուսացնցուղ և այլն

Էջմիածին լեառն Սինա մեծին Մովսէսի ,
Սուրբ կտակարան Նոր օրինաց 'ի սմա աւանդի .
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին վէմ յաղթութեան հանգիստ Մօսէսի ,
Յոր Ամաղէկ չար թշնամին պարտեալ գտանի .
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին տուն աւետեաց հնոյ օրինի,
Զոր մարգարէն Նաբաւթ լեռնէն աչօք տեսանի .
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին հանգոյն փառաց Քորեբայ մեծի ,
Քաղցրութիւն յօդն անցանելով 'ի սմա բնակի .
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին Կարմելոս լեառըն Եղիսէի ,
Գեր քան ըզնա զօրք երկնային կան շուրջանակի .
Լուսացնցուղ և այլն ։

Էջմիածին նոր Բեթղէհէմ այրին նմանի,
Ծընեալ Աստուած աստ կրկնակի որդիս ծնանի.
Լուսացնցուղ և այն։

Էջմիածին համանմանի Թաբօր Հերմօնի,
Ցնծայ այսօր միանալով Որդւոյն Միածնի,
Լուսացնցուղ և այն։

Էջմիածին յարկ լուսեղէն մեծին Գրիգորի,
Կամարաձև տեսանելով զոր կառուցանի.
Լուսացնցուղ և այն։

Էջմիածին զարդ հոգևոր բազմաց ցանկալի,
Տացէ շնորհ երգող երգոյս Տէր Ահարօնի.
Լուսացնցուղ և այն։

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ։

Ա՛հ նոր օր փարելի նոր բարեկենդան,
ՅԱստուածուստ'ի վերուստ մեզ տօնցնծութեն.
Որ ուրախ ընդ սրտի տաս կեանըս մարդկան,
Ուրախ սիրտ՝ ուրախ կեանք՝ քև տուատանան։

Ա՛հ բարեաւ ծագեցար մեզ բարեկենդան,
Կարապետ և պարէտ Նորահրաշ գարնան.

Բն. երկիր մերկանայ զիւր քօղ ձմեռան ,
Իսկ սիրտ մեր զմռայլ հոգւոց տխրութեան ։

Կեալ ապա և օրհնել առէ մարգարէն ,
Զարարիչ յաւիտենից՝ Աստուած մեր Որ Էն ․
Զի եթէ փառք են նմա կեանք ազգի մարդկան,
Այս կենաց փառք՝ աւուրք ցնծութեան ։

Իսկ Որդին Նորին տայ անձն իւր ժամուց ,
Զարժանին իւրեանց միշտ զպաշտօն և զործ ․
՝Ի կշիռ իմաստնոյն խնդութիւն և լաց ,
Կանոնօք կալան միշտ զտեղիս իւրեանց ։

Ապաքէ՞ն հրճուեսցուք եղբարք միաբան ,
Սրբութեամբ կատարել մեր բարեկենդան ․
Եւ հանցուք Տուողին մեզ երանութեան ,
Զօրհնութիւն 'ի քնարս անմահ խնդութեան ։

Այս զոլով և վեհիս մերոյ Օծութեան ,
Շնորհիս Յովհաննու նոր բարեկենդան ․
Խնդրեսցուք յԱստուծոյ պահել անսասան ,
Ընդ յոլով ընդ հոլովս ամաց ցնծութեան ։

## ԿԵՆԱՑ ԹԱՍ ։

ՅՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ բազմաւ եղբարց ,
Առջէ զուրախ զիւր կատարած .
Երբ բաժակաւ ազնիւ գինւոյ ,
Խնդրեմք կեանըս բարեկամաց ։
Լեց , Լեց , Լեց ,
Լեց Մատռուակ ,
Զուրախարար
Քոյ ըզբաժակ ։

Յայսըմ պարկեշտ խրախճանի ,
Երջանկութիւն մեր պսակի .
Երբ բարեգութ Արքայն երկնից ,
Յանմեղ աղերս մեր խոնարհի ։
Լեց Լեց , Լեց ,
Լեց Մատռուակ ,
Զուրախարար
Քոյ ըզբաժակ ։

Յաւելուլ մեզ երանութիւն ,–
Բարեկամաց մեր բարութիւն .
Եւ Տան Հայոց՝ Մօր աշխարհի ,
Շքեղափառ Նորոգութիւն ։

Լե՛ց , Լե՛ց , Լե՛ց ,
Լե՛ց Մատռուա՛կ ,
Զուրախարար
Քոյ զբաժակ ։

Այս ապաքէն Պարոն———— ։
Լեցէ՛ անզէն քո կենաց Թաս ,
Եւ համօրէն ընտանեաց քոց ,
Մեր հարազատ բարեկամաց ։
Լե՛ց , Լե՛ց , Լե՛ց ,
Լե՛ց Մատռուա՛կ ,
Զուրախարար
Քոյ ըզբաժակ ։

# ՅԱՒԵԼՈՒԱԾ ։

## ԽԱՂՔ ԱՇՂԻՑ ԶՈՒՂԱՑՈՑ

### ՁԵՐ ՏՈՒՆՆ Ո՛ՐՏԵՂԱՑ ։

Ա[illegible] ձեր տունն որ տեղայ ,
Ասաց յԱրեւանովն արէ -
Տնազէր քուչէն չղալատես ,
Ռասսայ խէրէվանովն արէ ։

Մեր դուռան յաջըրած տախտայ,
Խաչերամ քաշէլ շատ վախտայ.
Ջուխտ գըմանն քարէ տախտայ,
Էն նշանաբանովն արէ։

Ծմակ գըման որմատակէն,
Բլանիքն այ ուրդէ ծակէն.
Վեր առ գըծէր քաշի փակէն,
Տուննն դար աջ գմնովն արէ։

Աջ գմանայ իմ օթախըն,
Դէպ յարևելեան պուճախըն.
Տուննն հաչի՝ մու չօմախըն,
Երկու երեք ջանովն արէ։

Ցարակու կլցնեմ թունդն,
Կդնեմ փոսի պռուկն.
Վեր առ ածէր դըրան կռունգն,
Դուռն բաց՝ միանովն արէ,

Ջուր ածէր կըրընդի ծակն,
Զըլըխըլըխկացնես դռան փակն.
Թաղէք կապէր ոտնէդ տակն,
Վեր ել՝ բալախանովն արէ։

Ասի ես մի ղարիբ բի գուղտարամ ,
Ասաց քեզ համար ճանիխայ կճարեմ .
Մ՚եր դրկցնուն կապսպարեմ ,
Երբ գոս՝ էնտոնց տանուծ արէ :

Կգնամ կապսպարեմ իւրն ,
Ճամխայ տայ գոս մեր կտուրն .
Թէ վայվայէ իմ սկեսուրն ,
Մի սիլլէ բերանուծ արէ :

Բալախանէն օխտն լամբայ ,
Կամանց վերճլ չղմբղմբայ .
Ամիրօղլուս կառեն թամբայ ,
Արղայ գրճր խանուծ արէ :

ԵՐԿՈՒ ԳԵՕՁԱԼ ՏԵՍԻ :

Էս օր երկու գեօզալ տեսի ,
Տիր ուրախ բարովին տալման .
Նարինջ տվի՝ ջուխտ յետ տվին ,
Մին էլ վերէն շահին տալման :

«Նարինջ տվին խաբխաբեցին ,
Տուն տարան փէտէրն յափեցին .

Զուգ զմնէ վերէս թափեցին ,
Համ աջ և համ ձախին տալման ։

Էնքան տվին խեւացէլի ,
Ռանգս թռէլէր սեւլացէլի ·
Թէ մին էլ արեւացէլի ,
Ջազմ որ կուլէցս կախին տալման ։

Ես մինի իւրէնք չոքին ,
Սկեսրարին կըոռըռոքին ·
Երբ որ եկաւ էն անհոգին ,
Առանց հրեշտակ մահ էր տալման ։

Ինձ գձեցին մէջ մարանին ,
Վըրին կալէլ կոպալանին ·
Ուզումին անաջալ անին ,
Բոմփ և չափալախին տալման ։

Սկեսուրն ինձ ծակծակէց ,
Տակըն դրէց կուլուլակէց ·
Դէմըն ջըէրս դարտակէց ,
Դէմըն չափալախէր տալման ։

Ինձ կապեցին ծխայ պոչէն ,
Չի պռծաման էստոնց միջէն ,

Համ գուռնին բռնէլ համ քուչէն ,
Մըգամ ճանապարհին տալման ։

Ես ասի Ամիրօղլինամ,
Դեռ մին բոմփէլ տուլին ինամ ․
Քանի ասի մօրէ մինամ ,
Դեռ էլ չիտնէս վազին տալման ։

## ՔՈ ՍԿԵՍՈՒՐՆ ԱԶԻ՛Զ ։

Եկ սեւ հասօր ինձ ինչ արար ,
Էդ քու սկեսուրն՝ ազիզ ․
Ինչ որ պխտէր ասինք իրար ,
Ինքըն ինձ , ես իւրն՝ ազիզ ։

Սկեսուրդ աչկէրն խռզումայ ,
Երբ գոլմանամ բարկանումայ ․
Կռնէս բռնում շպրտումայ ,
Գձում տռուի ջուրըն ․ ազիզ ,

Էն տռուի ցեխ թմբերումն ,
Ես հետ իմ ընկերումն ․
Հաշտի միջի լամբէրումն ,
Ջախտ եկայ կտուրն՝ ազիզ ։

Կտուրն ելայ դուռն փակեց ,
Աթարոցըն վեռեց թակեց .
Վ՚էր գձեց ջանըս ծակծակեց ,
Դանակ կ՚էր խատուրըն ազի՛զ .

Համ կծակէր համ կկծէր ,
Համ յետ կըտռնէր կանխծէր .
Ուղումներ արունս ծծէր ,
Էդ բըմօրվաթ քաֆէրն՝ ազի՛զ .

Էդ քաֆէրն տնըր ղօչաղէր ,
Դեռ լէվ էր որ նաչաղէր .
Ուզումներ ջանըս դաղդաղէր ,
Թերէլ էր շամխուրըն՝ ազի՛զ .

Շամփուրն տաքցանումէր ,
Ինձ ընդեղ չոքցանումէր .
Տեսի հաղորդ սպանումէր ,
Դուրսեր քաշէլ թուրըն՝ ազի՛զ .

Ճարս կտրեց աղաչեցի ,
Զօք անգամ ձեռըն պաչեցի .
Ճրագըն վառ էր փչեցի ,
Վաղ տվեց դէպ դուռըն՝ ազի՛զ .

Վազտ վէց յետնէս և կանչէց ,
Դէմս բօմփէց՝ դէմս չանչէց .
Մ՝թին հաշտին դէր ճանանչէց ,
Բընազամ շհուրըն՝ ազէզ ։

Եկաւ բռնեց մթին հաշտին ,
Վեր կոխէց թ.քէց իւր մշտին .
Ամիր օղլուս կող ու կշտին ,
Տվէց մինչ խէրուրըն՝ ազեզ ։

---

ԽԴ ՊԱՌԱՒՆ ։

ՃՈՒՆ պառաւն էս ի՞նչ արաւ ,
Իւր մարդին խաբով տուն տարաւ .
Ինչ որ ուզէց , նա էն արաւ .
Էն անիծած շուն պառաւն ։

Իւր մարդին տվէց ձեղն ,
Խաբով ղըկէց յերկար գեղն .
Մարդէց գաղտնի կերաւ եղն ,
Էն անիծած գող պառաւն ։

Մարդն յետ եկաւ գեղէցն ,
Պառաւն բռնեց բեղէցն .

Դուս արար մարդին տանիցն ,
Հաչհաչան քօփակ պառաւն ։

Պառաւն կթակէր շանն ,
Հարգիզ չէր առում տան բանն .
Կուտէր եօթըն դիզր թանն ,
Ճատակեր քօփակ պառաւն ։

Մարդի գլխին կածէր խողն ,
Ջրիցն կգողանէր փողն .
Սուտ կասէր ընէց իմ գողն ,
Սուտասան չխուտ պառաւն ։

Յարակուն որ գէր մուխն ,
Նօքար ունէր օխան՝ ութն .
Երբ կըգէն պառաւի մօտն ,
Ճատ կուրախանէր պառաւն ։

Ողջի հետ ղումար կխաղէր ,
Հազար՝ հարիւրով կտանէր .
Մաղզաքի կտէր կծամէր ,
Ղումարբազ քօփակ պառաւն ։

Մարդի միրուքն էր նա խուզում ,
Ձեռնէրով աչքէրնէր բզում .

Սիրուն ջահէլ մարդէր ուզում ,
Չէ՞ր ամաչման շուն պառաւն ։

Իւր խօսքն արաւ գնաց ,
Մին ջահէլ մարդ արաւ խնդաց .
Ծոխացաւ վերէն թռթռաց ,
Էդ մեր քօփակ շուն պառաւն ։

Խարսանքէն պատիւ արաւ ,
Ողջ մարդկանց տուննն տարաւ .
Ինչ որ եփէց ինքն կերաւ ,
Քաղցած թողէց դև պառաւն ։

Ամիր օղլի չո՞ւր երբ կասես ,
Մեր պառաւին կըամբասես .
Թէ դու գընաս գըխան ասես ,
Կկատաղի շուն պառաւն ։

ԽՐԱՏ ։

Ե՛կ իմ անդադար սիրա՛ քեզի տամ օգուտ ,
Գիշեր ցերէկ քոյ փառքն տուր Համիշայ .
Փառք տուր Աստուծոյ, ու ողորմութիւն
Գըխտ պահէ՛ր քո շարթ եղբար լուսնըն ։

Ինչափ կացէ՛ր մինչ քոյ դատըն գայ քողուած,
Վերա՛ւ, տուն տա՛ր մեհրեան աղաթով։

Մեհրեան աղօթն արա՛ երթայ ամաչի,
Գնայ իւր դօստ ու դըշնամն ճանաչի։
Ինչափ կացէ՛ր մինչ քոյ դատըն քեզ կանչի,
Յայնժամ վե՛ր կա՛ց գնա՛ ջօւաթով։

Ջօւաթն նամարդին չէ՛ տղամարդիննայ,
Զունքի ինքն իւր եղբարու շարթիննայ.
Իմանողի քշտին խաֆաթն մինայ,
Զըծակես դանակով, չըտաս քաղաթով։

Քաղաթով տալըն խաֆաթ չի գուշնամին,
Ուսուլով պիտի խանել նորա պնչի քամին։
Թալաբ ունես արզ մի անել հաքիմին,
Խստուըն սաղլէ՛ր՝ յինքաւ դաֆաթով։

Դաֆաթով յինքաւնելըն մի տալ թաղաֆուլ.
Ջլաըն պիրկ պախի՛ր, չնի թողուս թուլ.
Յաւէլ խօշի սա՛՝ թէ չանի ղաբուլ,
Յետոյ խտուըն խօսէ՛ր յուջաթով։

Ցուջաթի տակ մը գծել քու բանն ,
Թո՛ղ գնայ պռծուցանի եւրջանն .
Թէ ուզումաս գլուխ տանիս քոյ բանն ,
Ապա կայացրո՛ւր սապը ու թաղաթով :

Առանց համբերութեան դու բան մը առել ,
Օտար ձեթով քոյ ճրագն մը վառել .
Նօվ քեսայ մարդի հետ սօվդայ մը առել ,
Եթէ քաղցած մնաս օրով շաբաթով :

Օրով շաբաթով դուզն մնալն մանէ չէ ,
Ո՛վ կասի Նօվ քեսայ մարդն վնաս չէ .
Մին յինք առնիս՝ տասն յետ տաս՝ ղանէ չէ ,
Մոհասիլ կըլլի ղարղ ու բարաթով :

Մոհասիլը կբերի դուռըդ կքնի ,
Ոչ ուր չէ գնալ , տունէրն կխլնի :
Գիտուն դրկցին գերի լինես լաւ կլինի ,
Քան անգէտ եղբօր հետ Նստես սօհբաթով :

Անգէտ եղբօր սօհբաթն շատ վատայ ,
Թալաքում կդնի խաջաթըն շատայ .
Իմ սիրելք ասքա բոլորն խըատայ ,
Անկաջումըդ պահէր կա՛ց զգուշութեամբ :

Թաղճըրօղլի դու լէւ կացէր՝ լէւ արձ ,
Ես խըարամ վատ մարդոյ տեղն խաւարայ ·
Խօսքերդ իմացէր , հարգայ մէ փարթաւել
աւարայ ,
Եփէր կուլումըդ՝ ասա փասանդով ։

ՈՉԽԱՐ ԵՒ ԳԱՅԼ.Ն ։

ՑՒՐԱՐ հետ բաս արին Ոչխարն և Գէլն ,
Ոչխարն ասաց՝ մօտս պահապան ունեմ ,
Ձեռ քաշէր ինձանից , կտրէր քո մէլն ,
Դու ես անտէր գազան , ես չօբան ունեմ ։

Գէլն ասաց՝ չօբանիդ մատէն դէս արէ ,
Երթանք էն փոս ձորն, քեզ հետ բան ունեմ ·
Գեղեցիկ ծաղկունքըն բացուէլան սարէն ,
Արէ տես ինչ լաւ տեղ օթևան ունեմ ։

Ոչխարն ասաց՝ ես չեմ գըլէց քո մօտն ,
Ոչ քոյ ծաղեկն կուզեմ, ոչ քոյ փիս խոտն ·
Չօբանս հաստատ լինի՝ ձեռնի պարսատըն ,
Իմ թշնամու համար աչկահան ունեմ ։

Գէլն ասաց՝ ես մի մեծ անմի տէր եմ ·
Ղատ ձեռնարայ ղօնաղասէր եմ ·

Թէ գաս մօտս՝ ինչ սիրտդ կուզէ կբերեմ,
Բուռումայ ունեմ, դարման ունեմ, դան ունեմ։

Ուչխարն ասաց՝ դանըն ճուստիցայ սարին,
Վար և ցանքն ով տվէց քեզ պէս բադ․քարին.
Աստուած տէրս պահէ՝ ուտի իմ բարին,
Խումսեր ունեմ, կարաք ունեմ, թան ունեմ։

Գէլն ասաց՝ էդ ձեր գլխակեր շունն,
Մի գիշեր չի թողնում ընկնեմ ձեր տունն.
Որ քեզի ղօնաղ տանեմ իմ բունն,
Տեսնես ինչ գեղեցիկ՝ լաւ խիզան ունեմ։

Ուչխարն ասաց՝ ոչ մեծանայ քո ձագըն,
Նա էլ էր գունչն բերում դէպ իմ գմակն.
Քեզնից ինչ կստուրի քոյ յիշատակն,
Ամէն տեղ քեզ պէս չար դուշման ունեմ։

Գէլն ասաց՝ եթէ ձագիցս նեղանաս,
Կերթամ կասեմ, քեզ հետ չանի բադըլմաս,
Երեխես խաղալն մաթլաբ կմանաս,
Մ՚ի անիծանել՝ ես մի սիրական ունեմ։

Ուչխարն ասաց՝ անիծածայ քո ցեղըն,
Ընդուրան դժուարել խօլ խալայեղըն,

Ինքան վատ էք որ խարաբէնայ ձեր տեղն ,
Ես եմ լաւ , որ տէր և տիրական ունեմ ։

Գէլն ասաց՝ Աստուած քանդէ տրոջդ տունն ,
Դու խօմ յուսացէլաս էտ անիծած բունն .
Նա սարայի մեռնի՝ դու յիրիկունն ,
Ինձ մի խօսացանեւ՝ վատ բերան ունեմ ։

Ոչխարն ասաց՝ չլինի վատ բարեկամն ,
Թէ ճգնաւոր պառնաս՝ չեմ գոլ քո ժամն .
Երբ որ միտս կգայ քո գարշ ատամն ,
Կփախնեմ որչափ ջանումս ջան ունեմ ։

Գէլն ասաց՝ յերբ որ սարային դուրս ես գալիս ,
Երկու աչկերիցս արիւն է լալիս .
Իլայիմ որ դմակդ շօրօր ես տալիս ,
Հէնց գիտեմ մի խանում խաթուն ջան ունեմ ։

Ամիր Օղլի Ինչայ խօսքերդ պատճառն ,
Սատանէնայ Գէլն՝ բանդէնայ Գառն .
Մարդ պիտի մտածի իւր բարին՝ չարն ,
Ցիմանայ էն կենացն չար դուշման ունի ։

## ԵԱԼԱԼԻ

ԵԱԼԱԼԻ, հա՛յ ջանիման ջանիման,
Եա՛լալի ջախտ ալալին ջանիման.
Եա՛լալի պատկերըդայ աննման,
Եա՛լալի դէմք քո պայծառ փայլման։

Եա՛լալի, գլխիդ գաթաղուստ թէլն,
Եա՛լալի դու ես իմ սրտի մէջն.
Եա՛լալի գըլխէրըդայ աննման,
Եա՛լալի գլխուդ պատատ գօլման։

Եա՛լալի, մանդիլըդայ նախըման,
Եա՛լալի թշերդ պայծառ փայլման.
Եա՛լալի յունքերըդայ թաղ տուած,
Եա՛լալի սրտիս մէջն պաղ տուած։

Եա՛լալի աչքեր ունես ջէրանի,
Եա՛լալի տեսնողի խելքըն տանի.
Եա՛լալի երբ որ իշարաթ կանես,
Եա՛լալի սրտիս մէջ կըճաղես։

Եա՛լալի, աբարաթով գըուցտաս,
Եա՛լալի սիրով սրտիս նստածաս.

Եա՛լա՜լի կեռքնիդ մարգարիտայ ,
Եա՛լալի տասն չորս տարիդ Թամամայ ։

Եա՛լալի , մատնումդ լէ՛ մատանի ,
Եա՛լալի ինձ լայեղաս՝ ով կտանի ·
Եա՛լալի ձեռնիդ ոսկէ աբրըջան ,
Եա՛լալի քո անումնայ Մարիամջան ։

Եա՛լալի , աշրաֆէքդ ալմազայ ,
Եա՛լալի ինչ շարթ կտաս արազայ ·
Եա՛լալի ձեռներըդ նաշխուն խնած ,
Եա՛լալի խելքսայ խելագարած ։

Եա՛լալի , ոտնումդ ոսկէ խալխալ ,
Եա՛լալի խաղիդ գաունն մալմալ ·
Եա՛լալի ոտներըդ կարմիր խնած ,
Եա՛լալի տեսողանին մոլորած ։

Եա՛լալի , սիրուն սուրայի գարդան ,
Եա՛լալի շուռաս եկել Հնդստան ·
Եա՛լալի քեզ սիրումամ սրտովս ,
Եա՛լալի որ միշտ վեռուես բարովս ։

Եա՛լալի , բօյըդ նման սալվի ծառ ,
Եա՛լալի ուզումամ քեզ անդադար .
Եա՛լալի մէջկումըլեայ Զարքազի ,
Եա՛լալի քո տեսնողին երանի ։

Եա՛լալի , խելօք անձանց միջումնաս ,
Եա՛լալի գովելի մէջլըսումնաս .
Եա՛լալի մեզ ճուստ էր էդպէս բախտն ,
Եա՛լալի որ նստինք էսպէս թախտն ։

Եա՛լալի , նասիբ լինի քամբախտին ,
Եա՛լալի կենի մինչ միւս տարին .
Եա՛լալի գիշերէք ես անքունամ ,
Եա՛լալի ես քո սիրէն զարթունամ ։

Եա՛լալի , սպանէց էդ նոր խալն ,
Եա՛լալի եկ տես իմ սրտի հալն .
Եա՛լալի մանաս գոլման կտելն ,
Եա՛լալի որ ցոյց տաս քո պատկերն ։

Եա՛լալի , Քօս ինչ բանէրամ լսում ,
Եա՛լալի որ քեզ վերայան ասում .

Եա՛լալ՝ քո տալերքն շատ փոքրայ ,
Եա՛լալի քո խօսքերն շատ քաղցրայ ։

Եա՛լալի , ասմունքանիդ շարբէշար ,
Եա՛լալի ուզումամ քեզ անդադար ․
Եա՛լալի մեծ յուսովես կըսպասեմ ,
Եա՛լալի որ քեզի ես գտանեմ ։

Վ. ԱԽԾԱՆ

1897

[illegible]

2. [illegible]

3. [illegible]

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹ...
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՑԱՆԿ


Ամուսնութիւն .................... 1
Անուշահոտ վարդի Տերև .............. 47
Աշակերտաց հրաման փայլոք .......... 51
Աշնան Առաւօտ .................... 26
Ա՛ռ շուէլ ......................... 24
Ա՛ռ ղամբիւղ ....................... 24
Առ ո՞ւմ դիմեմ .................... 7
Աւէ Բնութիւն ..................... 8
Բաժանումն սիրահարաց .............. 40
Բարեկենդան ....................... 75
Բացուի՛ր բացուի՛ր ................. 62
Բլբուլն եկեալ .................... 57

Գէթ երանի ........................ 21

Եալալի ........................... 92
Եկա՛յք առ որս երթամք .............. 14
Երգ բիւլբիւլին ................... 43
Երկու գեղալ փեսի ................. 80

Երջանիկ վարդ .................... 13
Ես քեզ ցանկամ .................... 2

Ձայն նոր ունիմ .................... 12
Էդ պատառան .................... 84
ԷՋՄԻԱԾԻՆ .................... 73

Թո՛ղ ղի ծաւայէ .................... 11
Լոյս աչաց կարօտեմ .................... 18
Լո՛ւր ինչ Աղջիկ .................... 16
Խրատ .................... 86
Խօսէա՛յ ծիկ ծիկ .................... 66

Ծագեցար .................... 45
Կեանք Ուրախութեան .................... 9
Կեանք Պանդխտութեան .................... 20
Կենաց Թաս .................... 77
Կենաց իմ յոյս .................... 17

Հայկերգ .................... 70
Հոգւոյս Տիկին .................... 23
Ձեր տունն ո՞ր տեղայ .................... 78
ՄԱՅՐ ՑԱՆԿԱԼԻ .................... 69
Մանուկ տաղերգոյն .................... 61
Մնա՛յք բարեաւ ես գնայի .................... 67

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0678179

547-9
153